

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

**Ո՛Վ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ  
ՓՐԿՈՒԹՅՈՒՆԴ ՄԻԱՅՆ ՔՈ  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է  
ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ ԵՎ  
ՈՉ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ  
ՀԱՅՐԵՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ  
ԿԵՐՏՈՂ ՄԻԱԿ ՀՈՒՅՍՆ Է**



# 179, Oqnuunu 2013 p. No 179, August 2013 ۱۷۹ امرداد ماه ۱۳۹۲ شماره

# Այս համարում

## Հայերեն բաժին

- 1- Իրանահայ Համայնք.....1
- 2- Հայաստան.....4
- 3- Արցախ.....9
- 4- Արեւմտյան Հայաստան.....9
- 5- Միջազգային.....16
- 6- Մշակույթ .....22
- 7- Խոհեր.....27
- 8- Գծանկարչություն.....27
- 9- Հայերեն-պարսկերեն առաձանձի.....27

## Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր.....1-5



**Շապիկի առաջին էջում`** Հայրենի Երիտասարդությունը մեր ապագան կերտող միակ հույսն է

**Վերջին էջում`** Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի «Հայ Պետականության Պատմություն»-ը 7 հատորով Իրանահայ Համայնքի Ամբողջական Պատմությունը 10 հատորով

Համար 179, Օգոստոս 2013 թ.

No. 179, August 2013

ماهنامه لویس - شماره ۱۷۹ مرداد ماه ۱۳۹۲

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր`

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ` louys\_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն` www.louysonline.com

## LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys\_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

**Թերթի Փինը`** Հատավաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն`**

**Իրան`** մեկ տարի` 60,000 ռիալ

**Արտասահման`** մեկ տարի` 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

## Եգիպտոսը հայտնել է հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու մտադրության մասին



Օգոստոս 18, 2013 | 17:43

Եգիպտոսի ժամանակավոր Նախագահ Ադիլ Մանսուրը հայտարարել է Եգիպտոսի կողմից Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության փաստը ճանաչելու մտադրության մասին:

«ՄԱԿ-ում մեր ներկայացուցիչները կստորագրեն փաստաթուղթ, որով կճանաչեն թուրք գինվորականների կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը, որին մեկ միլիոն մարդ է զոհ գնացել», - [Twitter](#)-ի իր էջում գրել է Մանսուրը:

Ավելի վաղ Եգիպտոսը չէր հայտարարել Թուրքիայի հետ «Բարեկամական ծով» անվանումով զորավարությունները, որոնք Նախատեսված էին հոկտեմբերի 21-28-ին: Եգիպտոսի ԱԳՆ աղբյուրները հայտնել են, որ պլանային զորավարությունների չէր լինի հայտարարելը կապված է Թուրքիայի թշնամական հայտարարությունների ու գործողությունների հետ:

Եգիպտոսում Նախագահ Սուրսիի տապալումից հետո Թուրքիան սկսել է շատ խիստ քննադատության ենթարկել Եգիպտոսի ժամանակավոր իշխանություններին: Թուրքիան հայտարարել է, որ Եգիպտոսում ուժայինները իսկական «ջարդ» են իրականացրել երկրում: Կահիրեն, իր հերթին, մեղադրում է Անկարային Եգիպտոսի ներքին գործերին միջամտելու փորձերի մեջ, հաղորդում է «ԻՏԱՆ-ՏԱՍՍ»-ը:

Հիշեցնենք, որ օգոստոսի 15-ին, երկու երկրները հետ են կանչել իրենց դեսպաններին:

## Քաղաքապետարանի դիմաց շարունակում են անժամկետ նստացույցը




29 Հուլիսի 2013 - 16:11

Վահագն Մինասյանը, Գոռ Առաքելյանը և Մուրեն Մահակյանը քաղաքապետարանի դիմաց շարունակում են անժամկետ նստացույցը

Այն հարցին՝ արդյոք ակտիվիստները կմասնակցե՞ն քաղաքապետարանի կողմից ստեղծվող նոր հանձնաժողովի աշխատանքներին, որը միտված է կարգավորելու տրանսպորտի ոլորտը, Վահագն Մինասյանն ասաց. «Նստացույց անցկացնող երեքիցս ոչ ոք չի ընդգրկվի այդ հանձնաժողովների մեջ, քանի որ մենք չենք պատրաստվում մեկ սեղանի շուրջ նստել և բանակցություն վարել քրեաօլիգարխիկ, հանցավոր տարրերի, ապօրինի որոշումներ կայացրած և կիրառել փորձող անձանց հետ: Երբ կկատարվեն մեր կողմից հստակ ձևակերպված պահանջները, այդ ժամանակ կանդրադառնանք մյուս հարցերին»:

## Իրանահայ Դամայն

### Առաջին անգամ հրապարակվելու են Իրանի Սբ Թադեի հայկական վանքի արխիվային փաստաթղթերը



Առաջին անգամ հրապարակվել են 3ՈւՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Իրանի Սբ Թադեի հայկական վանքի արխիվային փաստա

թղթերը Իրանի Արթագրչրջանում, Մակու քաղաքի մոտ: Ավելի վաղվանքը նաև եղել է ՀԱԵ Ատրպատականի առաջնորդարանը, հայտնում է Բլագովեստ-ինֆոն:

Փաստաթղթերի մեծ մասը Իրանում ՀԱԵ այնժամանակվա ղեկավար՝ արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանկյանին (1913-1948) հասցեագրված նամակագրությունն է: Նամակներում հայապատգամավորները, բնակավայրերի ավագանու անդամները դիմում են արքեպիսկոպոսին խորհրդի և հրահանգների համար: Բացահայտվում են նաև կոնֆլիկտային իրավիճակները այս կամ այն հարցի շուրջ Ատրպատականի թեմի, Իրանի Մակու քաղաքի սարդարի և գեղջուկների միջև:

Ամեն տարի հուլիսին հայերը ուխտագնացություն են կազմակերպում դեպի Սբ Թադեի վանք, այս տարի այն նախանշված է հուլիսի 4-6:

## Անթիլասում ձեռնադրված առաջին Իրանահայ կուսակրոնը



Հայր Վահրիճ Աբեղա Ղարախանյան

Կիրակի 23 հունիսի 2013թ.-ին, Անթիլիասի Մայրավանքում, Մուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքում, երեք սարկավազներ օծվեցին ու ձեռնադրվեցին կուսակրոն քահանա, որոնցից առաջինը իրանահայ բրշ. Սեբաստիա սրկ. Ղարախանյանը վերանվանվեց Ս. Վահրիճաբեղա:

Այս լուրը թեև առաջին հայացքից սովորական է թվում, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ 1958թ.-ի Ս. Էջմիածնի գերակայության դեմ՝ եկեղեցական դավադրական բաժանումից հետո, որին դեմ կանգնեց ողջ իրանահայ համայնքը և մանավանդ ամբողջ եկեղեցական դասը, այսօր, Ս. Վահրիճաբեղա Ղարախանյանը Անթիլիասում օծված անդրանիկ իրանահայ կուսակրոնն է, այդ դեպքում լուրը ինքնաբերաբար ստանում է հատուկ կարևորություն:

Հայր Վահրիճ Աբեղա Ղարախանյանը, ավագանի անունով Սեբաստիա, ծնվել է 1991 թ.-ին, Թեհրանում: Նա

գավակն է Ս. Կոմիտաս քին. Ղարախանյանի եւ տիրուհի Լիդուշի:

Նախնական կրթությունը հերթաբար ստացել է ծննդավայրի «Մասուն» մանկապարտեզ-նախակրթարանում, «Նաիրի» ազգային տարրական եւ ապա ուղեցույց դպրոցներում: Այնուհետեւ, 2005թ. հոկտեմբերին, 14 տարեկան հասակում ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Պիկֆայայի դպրեվանք եւ մեկնել Լիբանան:

2009թ.ին ավարտել է ժառանգավորաց քառամյա բաժինը եւ մուտք գործել ընծայարան, 2010թ.-ին ձեռնադրվել կիսասարկավագ: Իսկ 2011թ.-ին, Ս. Նորայր եպիս. Աշգյանի ձեռամբ, ձեռնադրվել է սարկավագ, 2012-ին ավագ սարկավագ:

2011թ.-ին Լիբանանում երկրորդական բաժնի հայ աշակերտության մեջ կազմակերպված ասմունքի մրցություններում գրավել է առաջին տեղը: Տարբեր թեմաներով ելույթներ է ունեցել Բեյրութի ռադիո «Մևան»-ում: 2013թ.-ի հունիսի 13-ին հաջողությամբ ավարտել է դպրեվանքի ութամյա դասընթացները եւ հունիսի 23-ին Ս. Շահե եպիս. Փանոսյանի ձեռամբ օծվել, ձեռնադրվել է եւ վերանվանվել Ս. Վահրիճ Աբեղա Ղարախանյան:

Հայր Վահրիճը Անթիլիասում ձեռնադրված իրանահայ առաջին կուսակրոնն է, ու նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միակ միաբանը, ում բառերը, որպես արեւելահայի, ավելի պարզ ու հարագտ կինչէն իրանահայի սկանջին:

### Խոսրովա գիւղի Ս. Սարգիս եկեղեցին՝ բարւօք վիճակում

10/06/2013 16:29:00



**Մավմաստին էլ պէտք է «հազար ու մի» եկեղեցիներ ունենալու փառքի կոչումին արժանացնել մեր պատմութեան գրքում:**

Իրարու շատ մօտիկ, ո՛չ միայն հարեւան գիւղերում, այլ նոյն գիւղի տարբեր փողոցներում երբեմն կառուցած եկեղեցիներ կան Մավմաստում, այն տպաւորութիւնը թողելով այցելուի վրայ, թէ այստեղում ապրած հայութեան կա՛մ հաւատքը շատ է եղել, եւ կա՛մ ուրիշ գրադում չի՛ եղել նրանց համար...

Զարթացուցիչ այս նախաբանից յետոյ անցնենք Մավմաստի Խոսրովա գիւղի Ս. Սարգիս եկեղեցին, որտեղ այցելեց Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գեղպ. Ս. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանը Ուրբաթ 7 Յունիս 2013-ի առաւօտուն, եկեղեցու չափագրումը եւ տեղագրումը կատարելու համար, ինչպէս նաեւ ընդհանուր քննութեան ենթարկելու կառոյցի ներկայ իրավիճակը:

Ստորեւ Թեմակալ Առաջնորդի տեղագրութիւնը.-

«160 քիլոմետր քշելով Թարիզից հասանք Մավմաստի Խոսրովա գիւղի Ս. Սարգիս եկեղեցին, որ յարաբերաբար այլ եկեղեցիների, աւելի լաւ վիճակում է գտնուում: Շրջափակը ունի փայտեայ դարպաս, իսկ եկեղեցու հոգատարութիւնը յանձնւած է կողքի քուրդ հարեւանին, որ տարածքը հաւանական բարբարոսութիւնից փրկելու համար, իր պահապան հսկայ շունը կապել է բակի մի անկիւնում:

6x10 մետր ներքին տարածութեամբ եւ 6 մետր բարձրութեամբ հողաշէն եւ փայտածածկ եկեղեցու կառուցումը իրականացել է 1717 թիին: Տարբեր դարերում զանազան չափի վերանորոգումների է ենթարկել: Առաջին վերանորոգումը որը հիմնական է եղել, ուղակի հիմքից վերստին կառուցելու աշխատանք լինելով, 1832 թիին, բարերար Մկրտիչ Մեվլիեանի անունով մի արձանագրութիւն է թողւել արեւմտեան ճակատի միակ դրան վերեւ. «ՇՆՈՐՀԻՒ ՏԵՍՈՒՆ ՄԵՐՈՅ. ՅԻՍՈՒՍԻՒՄ ԲԵՐԵՍՏՈՍՄԻ/ ԵՒ ԱՐԴԵԱՍԲ. ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉ ՄԵՆՎԻԵԱՆ/ ՀԱՄԱՏԱՆՅՈՅ. ՇԻՆԵՑԱԻ Ս. ՍԱՐԳՅՊԵՏՄ/ ԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՅՈՅ. Ի ԹՎԻՆ 1832 ԱՄԻ՛»:

Սոյն արձանագրութեան ցածում կայ մի այլ արձանագրութիւն, որը 1900-ի 22 Յունիս թւականն է կրում: Այստեղ յիշատակւում է մի զանգ եւ զանգակատուն, բարերարի անունով: Ուրեմն, եկեղեցին ունեցել է նաեւ զանգակատուն, որը 1900-ին է կառուցւել, հետեւեալ արձանագրութեամբ. «ՅԻՇԱՏԱԿԷ ԶԱՆԿՅՊԵՏ/ ԵՒ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԴ ԱԼ/ ԽԱԹՈՒՆԴ՝ ՅՈՒՄԱՆ ԻՆԿԱԾ (Իճ կամ ՔՎՅ)ՆԱՆԵԱՆ 1900 22 ՅՈՒՆԻՍԻՄԻ՛»:

Ներկայիս եկեղեցին զանգակատուն չունի, այլ քառանկիւն հողաշէն մի կառոյց է: Դրա վերջին վերանորոգութիւնը կատարւել է 1955 թիին, Պրն. Միքայէ Մահակեանի բարերութեամբ, ի յիշատակ իր ծնողների: Վերանորոգութեանը հսկել է Պրն. Գաբրիէլ Մահակեանը. «ՍՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՆՈՐՈՂԳԵՑ/ Պ. ՄԻՔԱՅԷԼ ՍԱՀԱԿԵԱՆԸ/ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ԾՆՈՂՆԵՐԻ/ Պ. ԳԱԲՐԻԷԼ ՍԱՀԱԿԵԱՆԻ/ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՍԲ/ 19 ՄԱՅԻՄԻ 1955.Թ ԽՈՍՐՈՎԱՄ:»: Այս վերանորոգութեան ընթացքում եկեղեցին սալաշատակւել է նաեւ, մինչեւ խորանի բեմի ճակատը:

Վերոյիշեալ այս արձանագրութիւններից վերեւ կան երկու զարդախաչեր, որոնք վերանորոգութեան տարբեր առիթներով ամրացւել են եկեղեցու ճակատին:

Շրջափակում, հանգստի քարերի մօտ մնացած մի քար ենք նշմարել սեւ բազալից, որի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «ՄԱՄՆԱԿԻՅ ԴԱՆԻԷԼ

ՄԱՀԱԿԵԱՆ»: Սոյն միատողեայ մէկ մետրանոց քարը համեմատելով եկեղեցու դրան երկու կողմերի սիւների հետ, գտանք որ դա այդ սիւների վերի միացման մասն է եղել, իր վրայ ունենալով այդ սիւների հանգչելու փորած տեղերը: Մեր եկթաղութիւնն է, թէ եկեղեցու կառուցման ընթացքում իր օժանդակութիւնը բերած այս անձի անունը մոռացութեան տրած լինելով, հետագայում աւելացած է այնտեղ:

Եկեղեցու կտուրի ծանրութիւնը պահելու համար, կենտրոնում երկու գերաններ են դրել իիբրեւ յենակ: Իւրաքանչիւր պատի վրայ բարձր դիրքով կան մեկական պատուհաններ: Խորանի յետեւի պատուհանը կամարաձեւ: Խորանը փայտեայ է, ու խնամքով պահած սփռոցով ու համեստ զարդերով: Խորանի բեմի առջ, ցածի կենտրոնում կայ մի գեղաքանդակ զարդախաչ: Խորանի կողքի խորշերից բացի, եկեղեցին ունի նաեւ մէկ այլ խորշ մուտքի դրան ձախ կողմում, որը նախապէս հաւանաբար եղել է մկրտարանի խորշը, իսկ ներկայիս փակուել է աւագանի խոռոչը:

Տէր Ասատուր Պետրոսեան, Տէր Օհանէս քահանաները ծառայել են 1800-ականներում եւ իրենց յաւիտենական հանգիստը մտել ու թաղուել եկեղեցու մուտքի դրան դրսի աջ կողմում: Իւրաքանչիւր քահանայի հանգստի քարի գլխին կայ մի սովորական խաչքար: Մնացած հանգստի քարերը առհասարակ Սահակեան գերդաստանին են պատկանում, որը ինչպէս մեր ենթադրութիւնն է, եկեղեցու գլխատր բարերարներն են եղել: Նրանցից մէկի՝ Աբրահամի տապանաքարի աջ կողմում մի հրացանակիր ձիաոր է քանդակուել: Նա կրում է մի զինուորական գլխարկ, որը նշանակում է թէ նա սովորական որսորդ չի, այլ շատ հաւանաբար ռստիկան: Ապրել է 1800-ական թերին:

Եկեղեցու համար ելեքտրականութեան հոսանք ապահովուել է 1991 թ. .:

### Սանամերիկ գիւղի Ս. Սարգիս եկեղեցու հարեւանները կարօտով յիշում են հայերին

10/06/2013



Շաբաթ 8 Յունիսի 2013-ին, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Գերայ. Տ. Գրիգոր Մ. Վրդ. Չիֆթճեանը հետազոտական այց տւեց Մալմաստի նախկին հայաշատ Սանամերիկ գիւղի Ս. Սարգիս եկեղեցիին, որը 1758-ին է կառուցւել: Ստորեւ Թեմակալ Առաջնորդի կատարած տեղագրութիւնը.-

«185 քիլոմետր Թաւրիզից քշելով, օրւայ տայ ժամին հասանք Սանամերիկ: Փողոցներից մէկի մէջ, մի թէյատան առաջ տարեցներ հաւաքւած զրուցում էին: Հազիւ իմացած մեր հայ լինելը, կարօտի ողջագուրումներով փաթաթեցին մեր վզին, իրենց նախկին հարեւանների՝ Արտաւազի, Արտաշէսի, Համբարձումի եւ անվերջանալի անուանաշարքով անձերը յիշելով, որոնց հետ ապրել էին նոյն այդ գիւղում: Անոնք անվերջ մատնացոյց էին անուն տներ, հողամասեր, որոնք էս կամ էդ հային էին պատկանել, միշտ «վա յ, վա յ» բացազանչութիւնը աւելացնելով, ու արտայայտելով մեծ կարօտ անցեալի հայ բնակչութեան նկատմամբ:

«Նրանցից մէկը՝ ամենէն տարեցը անմիջապէս ընդառաջելով մեր փափաքին, մեծ հաճոյքով առաջնորդեց մեզ գիւղի այժմու ծայրամասային շրջանը, որտեղ էին գտնուում հայոց եկեղեցու աւերակները: Մա միակ գիւղն էր ցարդ մեր այցելւածներից, որտեղ բոլոր հարեւանները ցաւով յիշեցին հողաշէն եկեղեցու հետզհետէ ինքնափուլ լինելը:

«Հողաշէն եկեղեցուց մնացած միակ պատի բեկորը Արեւելեան պատը՝ խորանի յետեւի մասն է: Նոյն դարաշրջանում կառուցւած եկեղեցիների չափով ու նմանութեամբ մի եկեղեցի է եղել Ս. Սարգիսը, փայտածածկ ու գերանաշէն կտուրով: Եկեղեցու հիմքերի ուսումնասիրութիւնից ի յայտ եկաւ, թէ սա 6x8 տարածքով մի փոքր եկեղեցի է, հաւանաբար 5 մետր բարձրութեամբ: Գերանների մի մասը դեռեւս մնում էր, իսկ մուտքի դրան երկու կողմերի սեւ բազալից յղկւած երկու քարերը կանգուն էին, ցոյց տալով եկեղեցու մուտքը:

«Յուզիչ անակնկալ էր բոլորի համար, երբ մուտքի դրան մօտ եկեղեցուց թափած սուրբ հողերի տակ թաղւած մի կիսակամար նշմարեցինք, դարձեալ սեւ բազալից, որի վրայ մետրոպատառ հայոց լեզուն երեւաց յանկարծ: Եկեղեցու դրան թագն էր այդ կամարը, իսկ արձանագրութիւնը՝ 1835 թիւն, եկեղեցու վերանորոգութեան առիթով թողած էր բարերարը:

«Արձանագրութեան տառերի փոսերում հողը քարացած լինելով կարելի չէր ընթերցել: Գիւղացի կանայք մեծ ուրախութեամբ սափորներով ջուր եւ աւել բերեցին ու մեզ հետ միասին նախ սրբեցին եւ ապա լւացին ու մատներով փորեցին հայերէն այբուբենի տառաձեւերը, բացայայտելով հետեւեալ համեստ արձանագրութիւնը, գրաբար լեզուով.

“ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ Ս[ՈՒՐ]Բ. ՍԱՐԳԻՍ/ ԵԿ[ԵՂԵՑԻՍ]. ԱՐԴ[ԵԱՄԲԲ] ՀԱՍԲ[ԱՐՁՈՒՍ] ՀՈՎՍԵՓԵԱՆԻ/ 1835թ.”:

«Եկեղեցու աւերակների մէջ մեր աղօթքը կատարելով երբ պիտի հեռանայինք գիւղից, անկարելի եղաւ մերժել գիւղացիների հիւրասիրութիւնը, որը գիւղի նախկին հայ բնակչութեան նկատմամբ կարօտի երկրորդ արտայայտութիւնը եղաւ»:

**Հայաստան**

**Ի՞նչ բնույթ պետք է ունենա Հայոց  
ցեղասպանության փոխհատուցումը.  
պարզաբանում է Աղվան Հովսեփյանը**



**Հուլիս 05, 2013 | 16:35**

Հայ իրավաբանների խնդիրներից մեկը Հայոց ցեղասպանության կազմակերպիչների, դրդիչների եւ օժանդակողների բացահայտումն է: Այս մասին, այսօր՝ հուլիսի 5-ին, «Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» խորագրով Իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովի ժամանակ հայտարարել է Հայաստանի գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը: Համաժողովը կազմակերպել է Մփյուռքի նախարարությունը:

«Խոսելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման մասին՝ մենք հիմնական պատասխանատու ենք համարում Թուրքիային: Թուրքիան, իրավաբանական լեզվով ասած, ոճրագործության կատարողն է: Եվ դա այդպես է: Բայց մենք՝ իրավաբաններս, լավ գիտենք, որ ոճրագործները հաճախ ունենում են հանցակիցներ՝ կազմակերպիչներ, դրդիչներ, օժանդակողներ: Իսկ եղել են արդյոք անհատ անձինք, միջազգային բացահայտ կամ գաղտնի կազմակերպություններ, ժողովուրդներ եւ պետություններ, ովքեր կազմակերպել, օժանդակել կամ դրդել են Հայոց ցեղասպանությունն իրականացնողներին: Եվ գլխավորը՝ ինչ նպատակով: Գրականության մեջ արդեն հայտնվել են որոշ տեղեկություններ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների, օժանդակողների, նույնիսկ համակատարողների մասին: Բայց այդ տեղեկություններում բարձրաձայնված միջազգային կազմակերպությունների եւ պետությունների մասին ես առայժմ լռում եմ, քանի որ դրանք սոսկ վարկածներ են, որոնք իրավական լուրջ հետազոտությունների կարիք ունեն», - հայտարարել է ՀՀ գլխավոր դատախազը:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացման իրավական հարցերին, ապա

Ա.Հովսեփյանի խոսքով, այստեղ էլ հայ իրավաբանները լուրջ անելիքներ ունեն:

«Այստեղ մի շարք իրավաբանական խնդիրներ են ծագում: Անվիճելի է, որ Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացումը կապված է փոխհատուցման հետ: Ի՞նչ բնույթ պետք է ունենա այդ փոխհատուցումը, գուտ բարոյական, թե՞ նաեւ գույքային եւ տարածքային: Ինչպիսի՞ն է փոխհատուցում ստացող սուբյեկտների շրջանակը: Այն պետք է ընդգրկի ցեղասպանության զոհերի ժառանգներին, Հայ առաքելական Եկեղեցուն, Հայաստանի Հանրապետությանը, թե՞ բոլորին միասին: Իմ խորին համոզմամբ, ցեղասպանության զոհերի ժառանգները պետք է նյութական փոխհատուցում ստանան, Հայ Եկեղեցուն պետք է վերադարձվեն Թուրքիայի տարածքում հրաշքով կանգուն մնացած եկեղեցիները եւ եկեղեցապատկան հողերը, Հայաստանի Հանրապետությունը պետք է ստանա իր կորցրած տարածքները եւ այլն: Բայց այդ բոլոր պահանջները պետք է ունենան անթերի իրավական հիմնավորումներ», - ընդգծել է գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանը:

**Թուրքիայի ԱԳՆ-ն բողոքում է Աղվան  
Հովսեփյանի հայտարարությունից**

13 Հուլիսի 2013

Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը պաշտոնական հաղորդագրություն է տարածել, որով իր դժգոհությունն է հայտնել ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի հայտարարությանը, որով նա խոսում էր պատմական հայկական տարածքների վերադարձի մասին:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ բարձրաստիճան պաշտոնյայի (ՀՀ գլխավոր դատախազի) այս հայտարարություններն անընդունելի են և հակասում են ՄՄԿ-ի և ԵԱՀԿ-ի սկզբունքներին, որի անդամ է նաև Հայաստանը:

«Պետք է շատ հասկանալ, որ ոչ ոք իրավունք չունի Թուրքիային հողային պահանջներ ներկայացնել», - նշված է հաղորդագրության մեջ:

**Հայաստանը ձեռք է բերել չինական  
AR 1A համալիրներ**

19 Օգոստոսի 2013 - 17:50

Համազարկային կրակի այս հրթիռային համալիրը ռուսական Շմերս-ի արդիականացված տարբերակն է: «Ազատության ռադիոկայանի տեղեկություններով, Հայաստանի զինված ուժերը համալրվել են համազարկային կրակի հրթիռային նոր համալիրներով, որոնց հեռահարություն հասնում է մինչև 130 կիլոմետրի: Մեր աղբյուրները, սակայն, չեն նշում համալիրների կոնկրետ թիվը հավելելով, թե խոսքը չինական արտադրության AR1A համալիրների մասին, որոնք

համարվում են ռուսական նմանատիպ Շմերս համալիրների արդիականացված տարբերակը, ավելի հեռահար են, քան Շմերս-ները, և որոնց մշակման գործում իրենց մասնակցությունն են ունեցել նաև Ռուսաստանի ռազմաարդյունաբերության համալիրի ձեռնարկությունները:



Վերջերս, հիշեցնենք, հայտնի դարձավ, որ Ադրբեջանը Ռուսաստանից ձեռք է բերել Շմերս համալիրներ: «Ազատություն» ռադիոկայանի հարցին ի պատասխան, Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը ո՛չ հաստատեց, ո՛չ էլ հերքեց AR1A նոր համալիրների ձեռքբերման մասին տեղեկությունը:

«ՀՀ ՋՌԻ-երը մշտապես համարվում են նորագույն զինատեսակներով և բարձրացնում են մարտունակությունը: Այդ ձեռքբերումների մասին հանրությունը իրազեկվում է պարբերաբար: Մենք ունենք համալրման և ձեռքբերումների մեր հստակ պլանները և հետևում ենք դրանց», - ասաց Հովհաննիսյանը: Հիշեցնենք, պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանը բազմիցս հայտարարել է, թե նոր սպառազինությունների ձեռք բերման գործում Հայաստանի ռազմական գերատեսչությունը շեշտը դնելու է հեռահար և ճշգրիտ համակարգերի վրա: HayNews.am

### Եթե ցանկանան սորից բարձրացնել զինը, պահանջով հանդես գանք, որ տրանսպորտի զինը լինի 80 դրամ

26 Հունիսի 2013 - 11:40

Երբ լսում ենք գծատերերին, պարզվում է, որ դա սարսափելի աշխատանք է. մարդիկ տակ են տալիս ու տակ են տալիս, բայց չէ որ այդ գծատերերը գեներալներ են, պատգամավորներ են, իշխող կուսակցության անդամներ են և Հենրիկ Նավասարդյանի եղբոր ընտանիքն է:

Այսպես արձագանքեց այսօր մամուլի ասուլիսում հեռուստամեկնաբան Պետրոս Ղազարյանը գծատերերի կողմից հնչող բողոքներին: «Չի կարող այդպես լինել: Մեր գծատերերը գիտեն, որ այն

դարձել է փակ ակումբ, և մեզանից որևէ մեկը չի կարող գնալ և գծի տեր դառնալ: Դրա համար դուք պետք է լինեք իշխանության մերձավոր: Եթե դա վատ բիզնես է, թող մրցույթ լինի, գուցե գալիս է նոր կազմակերպություն, որն ավելի լավ պայմաններ է առաջարկում, չկա ռեալ մրցույթ, հասկանում ե՞ք», - ասաց նա: Պետրոս Ղազարյանը նշեց, որ որևէ մեկը չի կարող ասել, թե որքան է տրանսպորտի ոլորտում շրջանառությունը. «Երեկ մի գազել անցավ, մեջը մի 25 հոգի մարդ կար, մի քանի հետույք էլ լուսամուտից դուրս էր ցցված, երեք շարք մարդիկ էին. Ո՞վ կարող է ասել, թե որքան եկամուտ է եղել այդ մեկ գազելից: Երբ խոսում ենք ծախսերից, եկամուտներից, պետք է ռեալ իմանանք, թե որքան է շրջանառությունն այս բիզնեսում, բայց իրենք գրել են 14-16 հոգի, որը իրականում սուտ է: Ստվերից երբ հանեն, այդ ժամանակ կխոսենք՝ բիզնեսը վնասակար է, թե ոչ»: Անդրադառնալով պահեստամասերի թանկացմանը, որը հիմնական պատճառաբանությունն է թանկացումների համար՝ Պետրոս Ղազարյանը նշեց. «Ինչու մեր հարևան Վրաստանում այդ նույն պահեստամասերը 2-3 անգամ էժան են: Ռազմիկ Զոհրաբյանն ասում է՝ Ռուսաստանն է թանկացնում, որ Հայաստանում խժոժություններ լինեն, իսկ մենք էլ, հիմա բողոքելով, ջուր ենք լցնում Ռուսաստանի ջրաղացին: Ռուսաստանը Վրաստանի հետ թշնամական պետություն է, բայց ինչու է Հայաստանի քաղաքացին գնում Վրաստանից, Թուրքիայից, Դուբայից անվաղող, պահեստամասեր բերում: Ինչու մեր մոտ պետք է լինի տարածաշրջանում ամենաթանկ գները. դրա պատճառը տնտեսական քաղաքականությունն է»:



Բանախոսն առաջարկում է, որ հայաստանցի գծատերերը գնան և Վրաստանից բերեն պահեստամասեր. «Մեկ օրվա խնդիր է, նրանք մեծ քանակությամբ են գնելու, և այդ դեպքում մի 20% կնվազեն գները, իսկ մենք կունենանք շատ ավելի էժան երթուղային գծեր»:

Խոսելով գծանշված կայանտեղիների մասին՝ Պետրոս Ղազարյանը նշեց, որ նախատեսվում է մեկ միլիարդ սուրբ հավաքել այդ նոր նախաձեռնության միջոցով, որից 700 մլն դրամը գնալու է կազմակերպությանը. «Ինչու ես պետք է կանգնեմ Երևանում, բայց վճարեմ գումար ինչ-որ կազմակերպությանը: Դրա պատճառն այն

է, որ բոլոր եկամտային աղբյուրները տրվել է մասնավորին: Երեկ կառավարության անդամները ռեյտինգ աշխատեցին կատարվածի վրա: Ինչու պետք է չորս, հինգ օր միտինգ անցկացնեն, նոր կառավարությունը տեսնի, թե այս ինչ է կատարվում»: Վերջում հեռուստամեկնաբանը ընդունեց, որ վարորդ լինելը սարսափելի դաժան աշխատանք է.«14 ժամ աշխատելուց հետո մարդը դառնում է գոմբի, դա ճորտական աշխատանք է»: Երևանի ավագանու «Քարն Երևան» դաշինքի ցուցակի անդամ Ալեն Միմոնյանն էլ հավելեց, որ շարունակելու է տեղափոխել քաղաքացիներին սեփական մեքենայով՝ դա համարելով ձևավորված շատ լավ ավանդույթ: «Գինը չի կարող լինել 100 դրամից բարձր: Կոչ եմ անելու, որ եթե ցանկանան նորից բարձրացնել գինը, պահանջով հանդես գանք, որ տրանսպորտի գինը լինի 80 դրամ», - ասաց նա:

**Հայաստան է ներկրվել բելառուսական տրակտորների առաջին խմբաքանակը**  
26 Հուլիսի 2013 - 13:00



Ի կատարումն Հայաստանի և Բելառուսի նախագահների միջև ձեռք բերված պայմանավորվածության, 2013 թ. մայիսի 31-ին Բելառուս կատարած այցի շրջանակում Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի և Բելառուսի վարչապետ Միխայիլ Մյասնիկովիչի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ բելառուսական կողմն ինքնարժեքով Հայաստանին է տրամադրելու շուրջ 300 տրակտոր: Վարչապետ Տիգրան Սարգսյանն այսօր այցելել է Կոտայքի մարզի Նուռնուս համայնք՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի կողմից (ՓՄՁ ՋԱԿ) Հայաստան ներմուծվող «Բելառուս» մակնիշի տրակտորների առաջին խմբաքանակին ծանոթանալու նպատակով: Կառավարության ղեկավարը գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի ուղեկցությամբ շրջել է տրակտորների պահեստով: Տիգրան Սարգսյանը հետաքրքրվել է նոր ձեռք բերված տրակտորների տեխնիկական հնարավորություններով և անձամբ փորձարկել դրանցից մեկը: Այնուհետև վարչապետի ներկայությամբ ստորագրվել է տրակտորի ձեռքբերման առաջին պայմանագիրը՝ ՓՄՁ ՋԱԿ-ի տնօրեն Վարազդատ Կարապետյանի և Շիրակի մարզի Ազատան համայնքի բնակիչ Խոսրով Բաղդասարյանի միջև: Առաջին գնորդը նախապատվությունը տվել է

վարչապետի վարած տրակտորին և շնորհակալություն հայտնել մատչելի պայմաններով գյուղտեխնիկայի տրամադրման համար: 2013 թ. արտադրության MT3-82.1 մակնիշի ժամանակակից տրակտորներն առանց միջնորդի գնվել են գործարանից և մեխանիզատորներին ու ֆերմերներին են առաջարկվում շուկայականից մոտ 30 տոկոսից ցածր գնով՝ կանխիկ (6.700.000 դրամ) և լիզինգային տարբերակով: Լիզինգն իրականացնում է ՓՄՁ ներդրումներ ունիվերսալ վարկային կազմակերպությունը հետևյալ պայմաններով՝ 20 տոկոս կանխավճար, տարեկան 9 տոկոս տոկոսադրույք, ներառյալ ռիսկի ապահովագրումը, ժամկետը՝ 6 տարի տրակտորների համար և 3 տարի՝ հարակից սարքավորումների համար:

**Այս շարժումը կառավարվում է կենտրոնից, բայց ոչ Բաղրամյան 26-ից. Աշոտ Մանուչարյանը՝ հայաստանյան վերջին իրադարձությունների մասին**  
29 Հուլիսի 2013 - 15:05



«Մենք չունենք պետական համակարգ, որում լինի գոնե մեկ սեփական միտք: Մենք թուրքալի պես կրկնում ենք այն, ինչ մեզ հրամցնում են, մենք չունենք օրենքներ, որոնք մենք ենք գրում: Այնպես որ, Հայաստանն անկախ չէ: Մեր ներսում է դրված այդ ոչ անկախությունը, մտքերը, որ մենք արտահայտում ենք, մերը չեն, կարծես մեր մեջ չի պ են դրել»: Այսօր ասուլիսում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանը՝ խոսելով հայաստանյան վերջին իրադարձությունների մասին: Վերջինիս կարծիքով՝ վերջին շաբաթում երիտասարդությունը Հայաստանում կարևոր ճեղքում իրականացրեց: Մանուչարյանը ստեղծված իրավիճակը բացատրում է հետևյալ կերպ: «Այս պարագայում չգիտես՝ ում ինչ խնդիր էր պետք լուծել, ու խժոժոց ստեղծվեց, արդյունքում մեկը գները բարձրացրեց, մյուսն ասաց՝ ինչ ես անում:



Եվ հանկարծ թատերաբեմ դուրս եկավ երիտասարդությունը ու կարևոր չէ երիտասարդների մի մասն ինքնուրույն էր դուրս եկել փողոց, թե՛ ոչ, կարևորը երիտասարդությունը կայացրեց մի միջավայր, որը Հայաստանն է»:

Միաժամանակ Աշոտ Մանուչարյանը չի բացառում, որ սա կառավարվում է մի կենտրոնի կողմից, սակայն ոչ Բաղրամյան 26-ի: «Այն կենտրոնը, որը կառավարում է մեր երկիրը, նրա պլանների մեջ մտնում է նաև Բաղրամյան 26-ը: Սա լավ դաս էր մեզ համար, որ աշխարհի եղած-չեղածը հասկանան, որ մենք հիմա պատրաստ ենք անկախ Հայաստան ստեղծելու»: Աշոտ Մանուչարյանն ընդգծեց, որ ցանկացած պետական պաշտոնյա, որը քիչ թե շատ ուզում է մի բան անել երկրի համար, նրա համար շատ կարևոր է հասարակական ճնշումը: Վերջինս նման համեմատական է անցկացնում: «Արտգործնախարարը, որը մի տեղ ուզում է ասել՝ ոչ, խուսափել ինչ-որ բանից, շատ կարևոր է, որ թիկունքում ունենա ժողովուրդ, որն իրեն պարտադրում է: Նախագահը, որ ուզում է մանենրել, շատ կարևոր է, որ ժողովուրդ ունենա: Սա շատ կարևոր է, որպեսզի Հայաստանը դիմանա բոլոր մարտահրավերներին»:

### Ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցություններն ավարտվեցին



**Արևելյան գործընկերության վեց երկրներից Հայաստանը չորրորդն է, որ ավարտում է Եվրամիության հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունները: Եվրոպական Հանձնաժողովի տարածած հաղորդագրության համաձայն՝ այսօր բարեհաջող կերպով ավարտեցին մեկ տարի, երկու ամիս տևած 7 փուլանոց բանակցությունները:**

Այսօր Երևանում կողմերը համաձայնության եկան հիմնական բաղկացուցիչների շուրջ, որոնք պետք է հիմք ծառայեն Հայաստանի և Եվրոպայի միջև առևտրային հարաբերությունների համար: Շուրջ 900 էջանոց փաստաթղթի բանակցությունները դեռ ամիսներ առաջ հայկական կողմը նախատեսում էր ավարտել մինչև տարեվերջ, սակայն օրերս Բրյուսելից հնչող այն կարծիքները, որ Հայաստանը կարող է արդեն հուլիսին փակել բանակցային էջը, փաստորեն, տեղին էին:

Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրի վերջնական ստորագրումից հետո Եվրոպան Հայաստանին առավելություններ կտրամադրի

իր շուրջ կես միլիարդ սպառող ունեցող շուկայում: Այդպիսով՝ Եվրոպական միության և Հայաստանի միջև առևտրային հարաբերությունների նոր շրջանակ կստեղծի, որը կսերտացնի Հայաստանի տնտեսական ինտեգրացիան ԵՄ-ի հետ՝ հայկական ապրանքների համար ճանապարհի հարթելով դեպի եվրոպական շուկա, ինչպես նաև հայկական շուկան բացելով եվրոպական ապրանքների համար:

Համաձայնագրի կողմից առաջարկվող բարեփոխումները նպատակ ունեն Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին՝ հնարավորություն տալով թե՛ հայկական, թե՛ եվրոպական կողմին ստանալ առավել տնտեսական շահույթ: ԵՄ-ն Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերն է, որն ապահովում առևտրային շրջանառության շուրջ 32 տոկոսը՝ անցյալ տարվա տվյալներով 951 միլիոն եվրո: Համաձայնագրի միջոցով Հայաստանը էլ ավելի կմեծացնի իր առևտրաշրջանառությունն ու սպասվող հասույթները եվրոպական շուկայից՝ միաժամանակ ունենալով եվրոպական սանիտարական և ֆիտոսանիտարական չափանիշներին համապատասխան արտադրվող ապրանքներ:

Անկախ ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ԵՄ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրի շնորհիվ երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի տնտեսությունը կարող է 146 միլիոն եվրո հավելյալ մուտք և ՀՆԱ-ի 2.3 տոկոս տարեկան աճ ապահովել, մասնավորապես, ոչ տարիֆային կարգավումներից ազատվելը կարող է խթանել այս ամենին: Իր հերթին, ԵՄ-ն ակնկալում է ունենալ մոտ 74 միլիոն եվրոյի շահույթ:

Եվրոպական Հանձնաժողովի հաղորդագրության մեջ նշվում է, որ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագիրը նշանակալի ազդեցություն կունենա Հայաստանի առևտրային շուկայի վրա՝ ապահովելով 15.2 տոկոս աճ արտահանման և 8.2 տոկոս աճ ներկրման ցուցանիշներում:

Հիշեցնենք, Ասոցացման համաձայնագրի շուրջ ԵՄ-Հայաստան բանակցությունները սկսվել են ուղիղ 3 տարի առաջ՝ նպատակ ունենալով գոյություն ունեցող Համագործակցության հին համաձայնագիրը փոխարինել ավելի նոր, բարեփոխումներ առաջարկող համաձայնագրով: Հիմա արդեն Եվրոպական Հանձնաժողովը պետք է բանակցությունների համաձայնեցված տեքստը զեկուցի ԵՄ անդամ 28 երկրներին, ինչից հետո Հայաստանն ու ԵՄ կթևակոխեն հաջորդ՝ պաշտոնապես ավարտին հասցնելու փուլին: Այժմ Հայաստանը նույն հարթության վրա է, ինչ Մոլդովան ու Վրաստանը, որը, ի դեպ, երկու օր առաջ ավարտեց բանակցությունները:

Այսպիսով, Արևելյան գործընկերության ծրագրում Հայաստանը համալրում է ԵՄ-ի կողմից առաջընթաց արձանագրած երկրների ցանկը՝ ետևում թողնելով Բելառուսն ու Ադրբեջանը:

## Գյուճարիում երկրաշարժից ի վեր ամրացման սպասող շենքերը փլուզվում են



*Գյուճարիում այսօր փլուզման և իսպառ վերացման վտանգի առջև են կանգնած ոչ միայն 100-ամյա և ավելի հնության, անկրկնելի հուշարձան-կոթողներ հանդիսացող շենք- շինությունները, այլ նաև նախորդ դարի կեսերին կառուցված քանդակազարդ շենքերը:*

Երկրաշարժից հետո գրեթե չվերականգնվեցին և չամրացվեցին այդ շինությունները, որոնց մեծ մասը բնակելիներ են: Այդ շենքերի բնակիչները չեն ընդգրկվել պետության կողմից բնակարանային փոխհատուցման ենթակա անօթևանների հերթացուցակում: Նախորդ տարիներին այդ բնակիչներին պարբերաբար խոստացվել է նրանց բնակարանների ամրացում-վերականգնում, սակայն մինչև օրս նման խնդիր չի լուծվել և տասնյակ վթարային շենքերի բնակիչներ հայտնվել են անելանելի վիճակում:

Թող Իրանի ավազակաբարո թեմական խորհուրդներն ու <ազգային մարմինները> Դաշնակցության ղեկավարությամբ պատասխան տան հայրենի աղետյալներին իրանահայ ժողովրդական օժանդակությունների թալանի համար:

## Թուրքիա այցելած հայաստանցի թիվը՝ 2013-ի հունվար-մայիս ամիսներ



**Օգոստոս 08, 2013 | 00:04**


Թուրքիա մեկնած Հայաստանի քաղաքացիների թիվը 2013 թվականի հունվար-մայիս ամիսներին կազմել է 26 569 մարդ:

Ինչպես [NEWS.am](http://NEWS.am)-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2013 թվականի

հունվար-մայիս ամիսների ընթացքում Թուրքիա մեկնած հայաստանցիների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 3,6 տոկոսով կամ 921-ով:

Միայն 2013-ի հունիսին Թուրքիա է այցելել 6 068 հայաստանցի, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 2,64 տոկոսով: 2012-ի հունիսին Թուրքիա էր այցելել 5 912 հայաստանցի: Նշենք, որ 2012-ի ընթացքում Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը կազմել է 70 956:

## Հայաստանի ասորական համայնք. Թուրքիային ցեղասպանության առևտրային պահանջների ներկայացման դեպքում ասորիները ձեռքերը ծալած չեն նստի



**Օգոստոս 05, 2013 | 14:37**

Հայաստանի ազգային փոքրամասնությունները քաղաքական խնդիրներ չունեն, հիմնական խնդիրները կրթամշակութային բնույթի են եւ երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում են: Այս մասին, այսօր՝ օգոստոսի 5-ին, մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Հայաստանում Ասորիների «Աթուր» միության անդամ, Մունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի ղեկավար Ռազմիկ Խոսրոբյանը:

Անդրադառնալով Ասորիների ցեղասպանության՝ նա նշել է. «Մենք բոլորս՝ հայերն ու ասորիները, հատկապես ասորիները, որոնք պետություն չունեն, տառապում ենք թերաբժեքության բարդությամբ: Պետք է լուծել հենց այս խնդիրը: Տա աստված, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը միայն միջոցառումներով չսահմանափակվի»: Ռազմիկ Խոսրոբյանը հույս է հայտնել, որ տեղի կունենա ինչ-որ իրադարձություն, որը կստիպի ամբողջ աշխարհին սթափվել: Նրա համոզմամբ, եթե ԱՄՆ-ն ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ապա դա կվերաբերի նաև ասորիներին, քանի որ վերջին 5-6 տարիների ընթացքում ասորիների, հույների ցեղասպանությունները դիտարկվում են Հայոց ցեղասպանության շրջանակներում: «Եթե աշխարհը Թուրքիային ինչ-ինչ պահանջներ ներկայացնի, ապա ասորիներն անմասն չեն մնա», - ընդգծել է նա:

Օգոստոսի 7-ը Ասորիների համաշխարհային ասոցիացիայի կողմից սահմանվել է որպես Ասորիների ցեղասպանության օր:

**Արցախ**

**Լեռնային Ղարաբաղը շարունակում է սպառազինվել. Մովսես Չակոբյան**



Յուլիս 26, 2013 | 21:50

Լեռնային Ղարաբաղը շարունակում է սպառազինվել. այդ առումով վերջին երկու տարիները բավականին հաջող տարիներ են եղել: Այս մասին, այսօր՝ հուլիսի 26-ին, լրագրողների հետ հանդիպման ընթացքում հայտարարել է ԼՂ պաշտպանության նախարար Մովսես Չակոբյանը, փոխանցում է «Ազատությունը»:

«Մենք երբեմիցե այսպիսի իրավիճակ չենք ունեցել, ինչ ունենք այսօր կոնկրետ սպառազինության, ռազմական տեխնիկայի համալրման ուղղությամբ», - նշել է Չակոբյանը, հավելելով, որ այժմ «լուրջ» խնդիր կա ձեռք բերված զինամթերքի տեղավորման հետ կապված եւ այդ հարցը լուծելու համար մեծ զինապահեստ է կառուցվում: Թե կոնկրետ ինչ զինատեսակներ է ձեռք բերել Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակը, Մովսես Չակոբյանը նախընտրել է չմանրամասնել:

Մտահոգություն հայտնելով Ադրբեջանի կողմից նոր զինտեխնիկայի ձեռքբերման կապակցությամբ պաշտպանության նախարարը միեւնույն ժամանակ նշել է, որ այդ երկիրը դեռեւս հնարավորություն չունի պատերազմ սկսելու եւ հաղթելու:

Մովսես Չակոբյանը նաեւ տեղեկացրել է, որ վերջին ամիսներին դիվերսիոն հետախուզական խմբերի հնարավոր ներթափանցման ուղղություններով մեծածավալ ինժեներական աշխատանքներ են իրականացվել, դիրքերի ուղղությամբ հակահետևակային ականներ են տեղադրվել:



**Արեւմտյան Ղայաստան**

**Դիարբեքիի հայկական եկեղեցու մի հատվածը կլինի թանգարան**

Յուլիս 18, 2013 | 04:00

Դիարբեքիի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու մի մասը դառնալու է թանգարան, որտեղ ցուցադրվելու են հայերին պատկանած ցուցանմուշներ:

Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ Դիարբեքիի քաղաքապետ օսման Բայրեմիբը եւ Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի նախագահ Էրգյուն Այըբը հուշագիր են ստորագրել, որով Սուրբ Կիրակոսի մի հատվածը վերածվելու է թանգարանի:

Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայրեմիբը նշել է, թե հավատում է, որ եկեղեցում ստեղծվելիք թանգարանը կնպաստի քաղաքի ներկայացմանը:

Նշվում է, որ եկեղեցու մի հատվածում Դիարբեքիի քաղաքապետարանը դարձնելու է թանգարան, իր միջոցներով ապահովելու հայերին պատկանած ցուցանմուշների ձեռքբերմանը, ինչպես նաեւ հոգ է տանելու այդ տարածքի խնամքով եւ պահպանությամբ:

**Թուրքիայի հայկական միակ գյուղի հյուրատունը թուրք պաշտոնյաների մասնակցությամբ է բացվել**



Օգոստոս 19, 2013 | 16:41

Թուրքիայի հարավային Հաթայ նահանգի Վաքըֆլը (Վագըֆ) գյուղում հանդիսավորությամբ բացվել է հյուրատուն:

Թուրքական Haberler կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայի միակ հայկական գյուղում հյուրատան բացման ժամանակ ելույթով հանդես է եկել Հաթայի նահանգապետ Ջելալթին Լեքեսիզը՝ նշելով, թե երկրում ապրող ժողովուրդների մշակույթին տեր կանգնելը նշանակում է տեր կանգնել ապագային: Թուրք պաշտոնյան ի խոսքում նաեւ շնորհավորել է հայերին Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը:

Նորաբաց երկհարկանի հյուրատունն ունի 5 համար, 1 խոհանոց եւ մեկ սրճարան: Հյուրատան շինարարությունն արժեցել է 460 հազար լիրա (250 հազար դոլար):

Հայկական գյուղի հյուրատան բացմանը բացի Հաթայի նահանգապետից, մասնակցել են Մամանդաղի քաղաքապետը, Մամանդաղի քայմաքամը, փոխքայմաքամը, նահանգի ոստիկանապետը, նահանգի

ժանդարներիայի հրամանատարի տեղակալը եւ այլ պաշտոնյաներ:

### Թաքնված գանձ. Վանի Սուրբ Թովմաս եկեղեցու բացառիկ լուսանկարները



**Յուլիս 31, 2013 | 00:04**

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Վանի հայտնի եկեղեցիներից, սակայն մինչ վերջին ժամանակները գաղտնի պահված Սուրբ Թովմաս եկեղեցին բացվել է այցելությունների համար :

Թեև գտնվում է դժվարամատչելի վայրում, Սուրբ Թովմասը նույնպես ենթարկվել է գանձ որոնողների բարբարոսություններին եւ գտնվում է փլուզման եզրին:

Շրջակա գյուղերի բնակիչները պնդում են, թե իրենք կողմ են որպեսզի այդ եկեղեցին վերանորոգվի եւ բացվի այցելուների առաջ վերանորոգված տեսքով եւ կարգի բերված ճանապարհով:

Վանա լճի հարեւանությամբ գտնվող Սուրբ Թովմասը գտնվում է Վանի Ոստան (Գեւաջ) գավառում: Եկեղեցին կառուցվել է 10-11-րդ դարերում: Նշվում է, որ այնտեղ են պահպանել Քրիստոսի աշակերտներից Սուրբ Թովմասի մասունքները: Հայտնի է, որ եկեղեցին վերանորոգվել է 1671 թվականին: Այն 18-րդ դարում կողոպտվել է, իսկ մեկ դար անց վերջնականապես դատարկվել:

### Թուրքական իշխանությունների կողմից ավերված Մալաթիայի հայկական գերեզմանատունը վերաբացվել է



**Յուլիս 01, 2013 | 13:14**

Թուրքիայի Մալաթիայի քաղաքապետարանի կողմից 2012-ի փետրվարի 2-ին հայկական գերեզմանատունը կառուցման փուլում գտնվող պահակատան եւ վերջին հրաժեշտի համար նախատեսված շենքերի ավերումից

հետո դրանք կրկին վերանորոգվել են եւ հանդիսավոր պայմաններում տեղի է ունեցել բացումը:

Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Մալաթիայի հայկական գերեզմանատան տարածքում վերակառուցված վերջին հրաժեշտի շենքի բացման արարողությանը մասնակցել են «Ժողովրդահանրապետական» կուսակցության պատգամավոր Վելի Ադբաբան, կուսակցության Մալաթիայի գրասենյակի նախագահ Նաջի Շավաթան, Շեյխյուրթի քաղաքապետ Մեհմեթ Քավուբը, նահանգի մուֆթի Հաջը Յուսուֆ Գյուլը եւ մի շարք այլ պաշտոնյաներ եւ քաղաքացիներ:

Նշենք, որ 2012-ի փետրվարի 2-ին Մալաթիայի քաղաքապետարանի հանձնարարությամբ քանդվել է Մալաթիայի հայերի գերեզմանոցում կառուցվող պահակատունն ու մատուռը: Այս դեպքը բողոքի ակիբ էր բարձրացրել Թուրքիայում եւ Թուրքիայից դուրս, որից հետո Մալաթիայի քաղաքապետը պնդել էր, թե շինությունները սխալմամբ են քանդել եւ խոստացել պետության հաշվին վերականգնել վնասը:

### Սասունի Մարութա սարի Բարձր Աստվածածին եկեղեցին վերանորոգվում է



**Օգոստոս 07, 2013 | 00:04**

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Սասունի Մարութա (Մարաթուկ) սարի գագաթին գտնվող Մարութա Բարձր Աստվածածին եկեղեցին վերանորոգման համար առաջին քայլն արդեն կատարվել է: Մասնագետները եկեղեցում չափագրումներ են կատարել:

Թուրքական Anadolu գործակալության փոխանցմամբ՝ Սասունի հայերի միության նախագահ Ազիզ Դադջըն նշել է, թե Բարձրան նահանգի Սասունի շրջանում գտնվող Մարութա սարի Բարձր Աստվածածին եկեղեցու վերանորոգման առաջին էտապն արդեն սկսվել է, եւ մասնագետների խումբն արդեն եկեղեցում չափագրումներ է կատարել:

«Եկեղեցու վերանորոգման նախագիծը գծվել է ճարտարապետների կողմից: Վերանորոգման աշխատանքներն արագացնելու համար նախարարություն հետ կապի մեջ կլինեն: Եկեղեցու վերանորոգումից հետո նախատեսում ենք մեծ թվով

գրասաշրջիկներ բերել Սասունի շրջան»,-նշել է Ազիզ Դադըն:

Նշենք, որ Մարութա սարը գտնվում է Արեւմտյան Հայաստանի Սասուն գավառում եւ եղել է սասունցիների սիրած եւ պաշտելի սարը, որը կոչվել է նաեւ Մարաթուկ: Սասունի հայերի միությունը ամեն տարի հուլիսի 28-ին կազմակերպում է վերելք-ուխտագնացություն Մարութա Բարձր Աստվածածին եկեղեցի:

### Թաքսիմի հրապարակի շինարարության ընթացքում հայկական տապանաքարեր են հայտնաբերվել



Յուլիս 13, 2013 | 16:26

Ստամբուլի հնագիտության թանգարանը, Թաքսիմ հրապարակի շինարարության ժամանակ հայտնաբերվել է 13 հայկական տապանաքար:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը՝ վկայակոչելով Ստամբուլի հայկական «Ակոս»-ին, Թաքսիմի հրապարակի շինարարության ժամանակ Դիվան հյուրանոցի առջև՝ Ասքեր Օջաղը պողոտայի վրա, հայկական տապանաքարեր են հայտնաբերվել, որոնք թվագրվում են 17-րդ եւ 19-րդ դարեր: Տապանաքարերը պատկանում են Սուրբ Հակոբ հայկական գերեզմանոցին, որի վրա կառուցվել են Դիվան եւ Հիլթոն հյուրանոցներն ու այլ շինություններ:

Այս պահին տապանաքարերը գտնվում են Ստամբուլի հնագիտության թանգարանում: Թանգարանի տնօրինությունը «Ակոս» թերթին տեղեկացրել է, որ մասնագետներն ուսումնասիրել են տապանաքարերը, որոնք հողի մակերեսից 1.50 մետր խորության վրա գրված վիճակում են եղել: Շինարարության ժամանակ 13 մարմարե տապանաքար է հայտնաբերվել:

Ստորեւ ներկայացնում ենք թանգարանի տնօրինության տապանաքարերի բնութագրությունը. «17-րդ դարի երկրորդ կես եւ 19-րդ դար թվագրված տապանաքարերից մեկի արձանագրությունը ջնջված է, անընթեռնելի է, իսկ մյուս երկուսն առանց արձանագրության են: 5 տապանաքարի միայն տարեթվերն են ընթերցվել: Ընթերցված տապանաքարերից պարզ է դարձել, որ մահացածները եղել են արական սեռի ներկայացուցիչ,

արձավաճառ, վարսավիր: Բացի այդ, տապանաքարերից մեկի վրա գրված է «Կեսարիա նահանգի Թալաս գյուղ», իսկ մեկ ուրիշի վրա՝ «Քեդվա գյուղ»: Արձանագրությունից հայտնի է դառնում, որ կեսարացի անձը ուխտի է գնացել: Տապանաքարերից 5-ը զարդանախշված է, 8-ը՝ ոչ: Գերեզմանաքարերի վրա, որպես զարդանախշ, կան կլոր փոսիկների տեսք հաղորդած ջրի գավաթ հիշեցնող նախշեր, խորհրդանշական տառեր, բույսեր եւ հայելու պատկեր»:

### Դիարբեքիում հայերին պատկանող 17 կտոր անշարժ գույք է հետ վերադարձվել



Յուլիս 09, 2013 | 12:22

Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամը քաղաքում հայերին պատկանած 190 միավոր անշարժ գույքի հետ վերադարձման դիմում է ներկայացրել, սակայն Դիարբեքիի հիմնադրամների վարչությունը միայն 17 միավոր անշարժ գույքի մասով է դրական որոշում կայացրել:

Թուրքական Ozgurhabergazetesi կայքի փոխանցմամբ՝ Դիարբեքիի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու գրանցամատյանում տեղ գտած տվյալներով Դիարբեքիի 20 թաղամասերում 1910-1921 թվականներին հայերին է պատկանել թվով 190 անշարժ գույք:

Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամը դեռեւս 2009 թվականին դիմել էր հիմնադրամների վարչությանը՝ հայերին պատկանող անշարժ գույքը հետ ստանալու պահանջով: Ուսումնասիրությունների արդյունքում Դիարբեքիի Շեհիթլիք Քյոշքլեր թաղամասում հայերին պատկանող 15 000 քմ տարածքով 17 կտոր անշարժ գույք է հայտնաբերվել: Սակայն այդ տարածքների հետ վերադարձման հարցում դժվարություններ են ծագել, քանի այդ տարածքներում կան անօրինական կառույցներ եւ հասարակական շինություններ:

Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի նախագահ Վարդգես Էրգյունն ուրախությանն նշել է, որ արդեն 17 կտոր անշարժ գույքի հետ վերադարձման որոշում կա, սակայն դժվարություններ կան դրանք հայերի անունով դարձնելու հարցում: Նա շեշտել է, թե

սովորական գործընթացով դրանք չստանալու դեպքում, իրենք կդիմեն դատարան:

### Էրդողանն իմ համակուրսեցին է եւ նա խոստացավ օգնել. Մալաթիայի հայերի միության նախագահ



Հունիս 02, 2013 | 00:04

Մալաթիայի հայերի միության նախագահ Խոսրով Քյոլեթափիթօղլուն հեռուստահաղորդման ժամանակ հայտարարել է, թե Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն իր համակուրսեցին է եւ նրա հրահանգով է արագ ընթացք տրվել Մալաթիայի հայկական գերեզմանատան շինությունների վերականգնմանը:

Մալաթիայի տեղական TV Malatya հեռուստալիքով հեռարձակվող «4-րդ ուժ» հաղորդման ժամանակ Մալաթիայի հայերի միության (HAYDER) նախագահ Խոսրով Քյոլեթափիթօղլուն պատմել է միության ստեղծման, Մալաթիայի հայկական գերեզմանատանը կառուցվող վերջին հրաժեշտի շենքի եւ պահակատան քանդման եւ վարչապետ Էրդողանի հրահանգով դրանց արագ վերականգնման մասին:

«Ստամբուլում ապրող Մալաթիայի հայերով շատ էին կարոտում Մալաթիան եւ մի օր որոշեցինք միություն ստեղծել եւ դիմեցինք միությունների հարցերով վարչություն, որտեղ էլ որոշվեց միության անունը դնել HAY, որը հայ է նշանակում եւ միացնել միություն (Demek) բառի առաջին մասնիկը: Այնուհետ որպես լոգո ընտրեցինք Մալաթիայի Սուրբ Երրորդություն դռան վրայի խաչը»,-Մալաթիայի հայերի միության ստեղծման մասին պատմել է Խոսրով Քյոլեթափիթօղլուն:

Անդրադառնալով Մալաթիայի հայկական գերեզմանատան խնդրին, HAYDER-ի նախագահը նշել է, թե նախկինում հայկական գերեզմանատունն ուներ 27000 քմ տարածք, այժմ մնացել է միայն 10000-ը: Նա շեշտել է, թե չեն կարողացել գտնել համապատասխան փաստաթղթերը՝ նոր օրենքի շրջանակներում կորցրած հողերը հետ ստանալու համար:

Մալաթիայի հայերի միության նախագահը, խոսելով նախորդ տարի կառուցման փուլում գտնվող Մալաթիայի հայկական գերեզմանատան վերջին հրաժեշտի շենքի (մատուռ) եւ պահակատան քանդման մասին, նշել է, թե

քանդված շենքերի արագ վերականգնմանը նպաստել է վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ով իր համակուրսեցին է եղել: Վարչապետի հետ նույն կուրսում էինք սովորում: Նա շատ լավ ֆուտբոլ էր խաղում: Միեւնույն ժամանակ աշխատում էր Ստամբուլի քաղաքապետարանի տրասնպորտի վարչությունում: Մի անգամ լսեցինք, որ Էրդողանին եւ Օղուզ անունով մեր մի ընկերոջը ուզում են ընդգրկել «Ֆենեբքահչե», սակայն ընտրեցին Օղուզին: Էրդողանը շատ էր տխրել:

Երբ Մալաթիայի քաղաքապետարանից քանդել էին կառուցման փուլում գտնվող գերեզմանատան շենքերը, վարչապետ Էրդողանը զանգահարեց մեզ, հայտնեց իր ցավը կատարվածի առթիվ եւ խոստացավ, որ կվերականգնվի ամեն ինչ»,-պատմել է Խոսրով Քյոլեթափիթօղլուն:

Նշենք, որ հունիսի 29-ին տեղի է ունեցել Մալաթիայի հայկական գերեզմանատան հրաժեշտի համար նախատեսված շենքի (մատուռ) բացման արարողությունը, որին մասնակցել պատգամավորներ եւ մի շարք պաշտոնյաներ:

2012-ի փետրվարի 2-ին Մալաթիայի քաղաքապետարանի հանձնարարությամբ քանդվել է Մալաթիայի հայերի գերեզմանոցում կառուցվող պահակատունն ու մատուռը: Այս դեպքը բողոքի ակիբ էր բարձրացրել Թուրքիայում եւ Թուրքիայից դուրս, որից հետո Մալաթիայի քաղաքապետը պնդել էր, թե շինությունները սխալմամբ են քանդել եւ խոստացել պետության հաշվին վերականգնել վնասը:

### Թուրքիայում հայերն ուխտ են կատարել Մարութա սարում



Հունիս 30, 2013 | 00:04


Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Մասունի Մարութա (Մարաթուկ) սարի ամենամյա ուխտին են մասնակցել աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայեր:

Ինչպես տեղեկացնում է թուրքական DHA լրատվական գործակալությունը, Մասունի հայերի միության նախագահ Ազիզ Դադըլի գլխավորությամբ հայերը բարձրացել են Մասունի Մարութա սար, մոմ վառել եւ աղոթել Մարութա Բարձր Աստվածածին մատուռում:

Մասունի հայերի միության նախագահ Ազիզ Դադըն նշել է, թե դեպի Մարութա սարի գագաթ սկսել են բարձրանալ հուլիսի 29-ին, առավոտյան ժամը 04:00-ին: Նա շեշտել է, թե Մարութա սար բարձրանալ ցանկացող հայեր շատ են եղել, սակայն ճանապարհների վատ լինելու պատճառով իրենք մերժել են ընդունել խոստանալով հաջորդ տարի արդեն վերանորոգված ճանապարհներով մեծ խմբով մասնակցել ուխտին:

Նշենք, որ Մարութա սարը գտնվում է Արևմտյան Հայաստանի Մասուն գավառում եւ եղել է սասունցիների սիրած եւ պաշտելի սարը, որը կոչվել է նաեւ Մարաթուկ:

### Պետությունն ընկել է իսլամացած հայերի հետեւից. Թաներ Աբջամ



Օգոստոս 07, 2013 | 02:02

Թուրքիայում օրեր առաջ հայտնի էր դարձել, որ ազգային փորքամասնություններն ունեն գաղտնի ծածկագիր, որի շնորհիվ պետությունը հսկողություն է իրականացնում հայերի, հույների, հրեաների եւ ասորի նկատմամբ: Այս համատեքստում Akunq.net-ը ներկայացրել է թուրքական Taraf-ում տպագրված Թաներ Աբջամի «Պետությունն ընկել է իսլամացած հայերի հետեւից» հրապարակումը:

1915 թ. մայիսին, երբ սկսվել է հայերի մեծ տեղահանությունը (Հայոց ցեղասպանությունը-Ակունքի խմբ.), սկզբում մահմեդականության ընդունումը ներկայացվել է որպես այլընտրանք: Ցանկացողը կարող էր մուսուլման դառնալ և չաքտրվել: ԱՄՆ-ի և Գերմանիայի հյուպատոսներն իրենց հղած զեկույցներում հաղորդում են, թե հայերը պետության դռների մոտ մեծ հերթեր էին գոյացրել, և տեղի էր ունենում հավաքական դավանափոխություն: Հավատափոխ եղողներն իրոք չէին տեղահանվում: Միայն իրենց ապրած վիլայեթի սահմաններում ցրվում էին որևէ մուսուլմանական գյուղում կամ ավանում: Մակայն իսլամ ընդունողների թիվը ենթադրյալից շատ ավելին էր: Կառավարությունը թերևս այն պատճառով, որ այդչափ մեծ կրոնափոխությունն անակնկալ էր իր համար, հարկադրված եղավ չեղյալ անել այդ որոշումը:

«Նպատակն արքայից փրկվելն է»

Պատճառը պարզ է. դավանափոխություն թույլ տալու նպատակն ուժացումն է: Մակայն մտավախություն կա, թե այդ հավաքական հավատափոխությամբ հայերը կպահպանեն իրենց իրական ինքնությունը: 1915 թ. հուլիսի 1-ին շրջաններ ուղարկված մի շրջաբերականով հաղորդվում է, թե այլևս թույլ չի տրվելու կրոնափոխ լինել: Ներքին գործերի նախարար Թալեաթն ասելով, թե «Մրանց նպատակը ոչ թե իրոք մուսուլման դառնալն է, այլ ընդամենը արքայից փրկվելը», պահանջում է, որ այդուհետ ոչ մի դեպքում լուրջ չընդունեն կրոնափոխությունը: Քանզի նրանք, եթե անգամ մահմեդական դառնան, «գերծ չեն մնա անկարգություններից»: Հետագայում հաճախակի են շրջաբերականներ ուղարկվում գավառներ, և կտրականապես հաղորդվում է, թե ոչ մի բացառություն չի արվելու:

Մինչև 1915 թ. նոյեմբեր ավարտվում է հայերից Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի-Ակունքի խմբ.) դատարկումը, և հայերի թիվը նվազեցվում պարբերական կոտորածների միջոցով: Իթթիհադական կառավարությունը պատեհ չի համարում հայերին թույլ տալ նորից կրոնափոխվելու: 1915 թ. նոյեմբերի 5-ին շրջաններ առաքված հատուկ գրությամբ ծանուցվում է, թե «կրոնափոխների պահանջները պետք է ընդունվեն, անկախ այն բանից՝ նրանք արքայվել են, թե ոչ»: Իսկ 1916 թ. գարնանից սկսած դավանափոխությունն այլևս հարկադրական է դառնում: Հայերին կազնեցնում են «կա՛մ մուսուլման դառնալու, կա՛մ էլ Դեր Ջոր արքայվելու» երկընտրանքի առաջ: Հայերը քաջապես տեղյակ են լինում, որ Դեր Ջորի անապատներ ասելով՝ կոտորած և բնաջնջում ի նկատի ունեն: Այդ տարեթվից սկսած՝ ողջ մնացած յուրաքանչյուր հայ մահմեդական է դառնում: Հայերին թույլ է տրվում վերստին նախկին կրոնին վերադառնալ 1918 և 1919 թթ. հրապարակված շրջաբերականներով: Կարող ենք վստահաբար ասել հետևյալը. եթե նրանք նորից քրիստոնեության չեն վերադարձել, ապա Անատոլիայում ողջ մնացած ամեն մի հայ որպես մահմեդական է այնտեղ մնացել:

#### Ճամփորդության իրավունք չկա

Լա՛վ, իսկ ինչպե՛ս են տարբերվելու իսլամացած հայերը: Կառավարությունը դեռևս չի վստահում հայերին՝ չնայած նրանց կրոնափոխ լինելուն, և հատուկ միջոցներ է ձեռնարկում նրանց վերաբերյալ, որոշ արգելքներ սահմանում: Արգելքները ցանկը գլխավորում է ազատ տեղափոխվելու իրավունքը: Հավատափոխ հայերը չեն կարողանում օգտվել այդ իրավունքից, որը շնորհված է մյուս մահմեդականներին: Ճամփորդել կարողանալու համար պարտավոր են լինում հատուկ թույլտվություն ստանալ, բայց դա շնորհելու իրավասությունը չի գտնվում տեղական իշխանավորների ձեռքին: Թույլտվությունը կարելի է ձեռք բերել միմիայն Ստամբուլից, անմիջականորեն՝ նախարարությունից (Ներքին գործերի-Ակունքի խմբ.): Մակայն, չնայած այդ արգելքներին, շարունակվում են առանց թույլտվության ուղևորություններ գրանցվել:

Թալեաթ փաշան հաճախ է հրամաններ ուղարկում շրջաններ և պահանջում, որ նախարարությունից թույլտվություն չստացած այդ անձանց արգելվի ճամփորդել:

Մակայն խնդիրը հետևյալում է. ինչպե՞ս պետք է պարզել ուղևորության մեկնել ցանկացողի կրոնափոխ հայ լինել- չլինելը:

Այդ հարցը լուծելու համար միայն մեկ ուղի կա. պետք է հայերի անձնագրերում այնպիսի նշում անել, որը կօգնի հասկանալ նրանց հայ լինելը: Այդ մասին որոշում է կայացվում: Այդպիսով հնարավոր կլինի կանխել մահմեդական անուն վերցրած հայերի՝ մյուս մուսուլման բնակչության մեջ անհետ կորչելը: Նրանց անձնագրերում արված այդ հատուկ նշումով կապահովվի մարդկանց տարբեր վերաբերմունքի ենթարկվելը, և կոյուրացվի նրանց հետևելու գործը:

**«Գաղտնի հեռագիր»**

Այս հսկողությունն ապահովելու նպատակով նախ 1916 թ. փետրվարի 1-ին բոլոր շրջաններ է առաքվում առաջին գրությունը: Եվ շրջաններից պահանջվում է «հաղորդել, թե կրոնափոխ եղած հայերն ի՞նչ կերպ են գրանցվել բնակչության ռեեստրներում, և դրանց փոխարեն նրանց ձեռքը տրված՝ անձը հաստատող փաստաթղթերում արդյոք բացահայտ կերպով նշված են նրանց դավանափոխ լինելը և ընտանիքի անդամների անունները, թե՞ ոչ»:

Ինչպես որ հասկանալի է դառնում նաև սույն փաստաթղթից, կառավարությունը պահանջում է, որպեսզի հարցն այնպես կարգավորվի, որ հավատափոխ եղած հայերը թե՛ բնակչության գրանցամատյաններում հատուկ կերպով արձանագրվեն, և թե՛ նրանց տրվելիք անձնագրերում այդ տարբերությունը նշված լինի:

1916 թ. փետրվարի 21-ին «գաղտնի» նշումով շրջաններ առաքված մեկ այլ հեռագրում ասվում է, թե «պարզ է դարձել, որ կրոնափոխ եղած հայերն ազատ կերպով շրջում են իրենց տրված նոր անձնագրերով»: Եվ դա կանխելու համար պահանջվում է, որ թաղամասի ոստիկանության պաշտոնյաների կողմից, առանց համապատասխան անձանց անձնագրերում «դավանափոխ է եղել» նշումը հանվելու, գրվի նաև նրանց գտնված վայրի անվանումը և «կնիք դրվի»:

Այդպիսով՝ համապատասխան անձինք ոչ միայն հատուկ գրանցված կլինեն բնակչության գրանցամատյաններում, այլ նաև մի հատուկ կնիք դրված կլինի, որի շնորհիվ պարզ է կդառնա, որ տվյալ անձը կրոնափոխ եղած հայ է: Ոստիկանությունը և ժանդարմերիան կգործեն այդ հատուկ կնիքին համապատասխան: Հետագա ամիսներին գավառներ ուղարկված հեռագրերով բազմիցս հիշեցվում է այդ մեթոդին դիմելու անհրաժեշտության մասին:

**Պարզ կդառնա նրանց հայ լինելը**

1917 թ. մայիսի 22-ի ամսաթվով թվագրված մի հեռագրից տեղեկանում ենք, թե ինչպես է իրականացվել այդ կիրառումը: Համապատասխան հեռագրում հիշեցվում է 1916 թ. փետրվարի 21-ի շրջաբերականի մասին, և

ստառացիորեն հետևյալ կերպ է կրկնվում այն գործողությունը, որը պետք է արվի. «... դավանափոխ եղած հայերի օսմանյան փաստաթղթերի հետևում պետք է գրվեն նրանց՝ բնակություն հաստատած ավանների և թաղամասերի անվանումները և կնքվեն ոստիկանության ղեկավարության կողմից: Այդ մասին գրված էր 1331 թ. (1915 թ.-Ակունքի խմբ.) փետրվարի 8-ի ծածկագիր հեռագրում: Այնուհետև նրանց օսմանյան փաստաթղթերում, որոնց հավատափոխությունն ընդունվել է, դարձյալ գրել նույն կերպ և կնքել բնակչության ղեկավարների կողմից: Ոստիկանության և ժանդարմերիայի գրասենյակներն էլ պետք է տեղյակ լինեն, որ այդ նշանը վերաբերում է դավանափոխ հայերին, և վերջիններիս ճամփորդությունների ժամանակ նրանց նկատմամբ վերաբերմունք դրսևորեն՝ ըստ պահի թելադրանքի»:

1916 թ. դրությամբ կրոնափոխ եղած հայերի ոչ միայն գրանցումները, այլ նաև անձնագրերն այնպես են կարգավորվում, որ հասկանալի լինի տվյալ անձանց հայ լինելը: Հենց սա է այն կիրառումը, որ ներկայում շարունակում է գործադրվել Թուրքիայում: Իթթիհադական մտայնությունը հանրապետական շրջանի ողջ ընթացքում մնացել է ղեկավար դիրքերում: Առանձնապես շատ բան չի փոխվել այսօր:

Խնդիրը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. այս պետությունը ստեղծվել է իր քաղաքացուն չվստահելու հիմքի վրա:

**Ստամբուլի գլխավոր դատախազությունն առաջին անգամ պաշտպանել է Թուրքիայի հայերի իրավունքները**



**Հունիս 29, 2013 | 17:37**

Թուրքիայում Ստամբուլի գլխավոր դատախազությունը մեղադրանք է ներկայացրել Յուսուֆ Չահիթ Փոլաթին՝ ազգությամբ հայ Լեւոն եւ Արթուն Բալըջօղլուներին վիրավորանք հասցնելու համար, հայտնում է Sabah-ը:

Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ Ստամբուլի գլխավոր դատախազությունն ընդունել է հայերին «գյավոր» (անհավատ) անվանած թուրքերի դեմ բողոքը:

Թուրքիայի բնակիչ Լեւոն Բալըջօղլուն եւ նրա որդի Արթունը մասնավոր դպրոցի ճաշարանի աշխատանքը



կազմակերպելու պայմանագիր էին ստորագրել Ֆիլիզ Ույարի հետ:

Այս տարվա ապրիլի 21-ին Ֆիլիզ Ույարի գործընկեր Յուսուֆ Փուլաթը դրսից հաճախողներ բերելու ցանկություն էր հայտնել, սակայն հայր ու որդի ընդդիմացել էին նշելով, որ դա հակասում է ճաշարանի կանոններին: Այդ կապակցությամբ հայրն ու որդին վարձել էին Քեմալ Բաթուին, որպեսզի վերջինս արգելի կողմնակի անձանց մուտքը տարածք: Իմանալով այդ մասին՝ Յուսուֆ Փուլաթը Քեմալին ասել էր. «Մի՛ դարձիր նրանց ստրուկը, նրանք հայ «գյավուրներ են»: Հայեր, սա մեր երկիրն է: Ես կսպանեմ ձեզ, կջարդեմ ձեր ոտքերը»: Չորս օր անց սպանալիքները կրկնվել էին, այս անգամ սպանացել էր նրա եղբայր Մեհմեդ Զահիթ Փուլաթը: «Եթե դուք մատով անգամ դիպչեք իմ եղբորը, կջարդեմ ձեր ոտքերը, այժմ մենք երեքով ենք եկել, սակայն եթե պետք լինի, 103 մարդ կբերենք»:

Յուսուֆ Փուլաթի նկատմամբ քրեական գործ է հարուցվել Թուրքիայի Քրեական օրենսգրքի 125/1 եւ 216/2 հոդվածներով, իսկ Մեհմեդ Զահիթ Փուլաթի նկատմամբ՝ 106/1 հոդվածով (հրապարակային սպառնալիք եւ վիրավորանք՝ կրոնական մոտիվներով): Այս հոդվածներով վեց ամսից մինչեւ երկու տարվա ազատազրկում է նախատեսվում:

### Վանի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում թուրքերը հարսանիք են անում



Հունիս 26, 2013 | 00:04

Այն, որ Վանի Աղթամար կղզու հայկական Սուրբ Խաչ եկեղեցու գեղեցկությամբ հիանում են բոլորը, ոչ գաղտնիք է, ոչ էլ զարմանալու առիթ, սակայն, որ եկեղեցի թուրք նորապսակներ են այցելում եւ լուսանկարվում, արդեն զարմանալի է:

Վանի Աղթամար կղզում [NEWS.am](#)-ի ֆոտոխցիկը ֆիքսել է, թե ինչպես են թուրք նորապսակները բարեկամների ուղեկցությամբ մտնում Սուրբ Խաչ եկեղեցի, իսկ նրանց հետեւից մտնում են օպերատորները՝ ֆոտո եւ տեսախցիկներով:

Նորապսակները հայկական եկեղեցու ներսում լուսանկարվում ու տեսանկարահանվում էին եւ

ուշադրություն չէին դարձնում, որ եկեղեցի մտած տեղացի եւ արտասահմանցի զբոսաշրջիկներն էլ են իրենց լուսանկարում:

Նշենք, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին 915-921 թվականներին կառուցվել է Վասպուրականի իշխան Գագիկ

Արծրունու պատվերով՝ ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ Մանվելի կողմից:

Թուրքիայի կառավարության միջոցներով Աղթամարի Սուրբ Խաչը 2007-ին վերանորոգվել է եւ բացվել է այցելությունների համար որպես թանգարան:

2010 թվականից Աղթամարի սուրբ Խաչում թույլատրվել է տարին մեկ անգամ պատարագ իրականացնել: Պատարագի անցկացման օր է նշանակվել սեպտեմբերի երկրորդ կիրակին, որը համընկնում է Սուրբ Խաչ եկեղեցական տոնի հետ:

### Վանում հայ եւ թուրք երիտասարդ գործարարների միջև համագործակցության հուշագիր է ստորագրվել



Օգոստոս 16, 2013 | 08:08

Վանում, օգոստոսի 15-ին մեկնարկած Հայ-թուրք երիտասարդ գործարարների համաժողովի ժամանակ կողմերը քննարկել են համագործակցության եզրեր գտնելու տարբերակները եւ օրվա վերջում փոխըմբռման հուշագիր ստորագրել:

Ինչպես տեղեկացնում է [NEWS.am](#)-ի թղթակիցը Վանից, «Երիտասարդ գործարարները միջսահմանային տնտեսական համագործակցության համար» ծրագրի շրջանակներում Վանում հավաքված հայ եւ թուրք երիտասարդ գործարարները անկաշվանդ խոսել են երկու երկրների միջև համագործակցության անհրաժեշտության մասին՝ նշելով, որ գործարար շփումները պետք է հասցնել այն մակարդակին, որ դրանք ազդեն քաղաքականության վրա:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության ծրագրերի ղեկավար Արմեն Մելքոնյանը նշել է, որ հայ-թուրքական պետական դիվանագիտությունը կանգ է առել ինչ-որ անհայտ մի կետի վրա, մինչդեռ հասարակական

դիվանագիտությունը՝ ի դեմս երկկողմ տնտեսական համագործակցության, նոր թափ է ստանում: Նա անդրադարձել է Հայաստանի և Թուրքիայի միջև գործարար համագործակցության ներկա իրավիճակին, առկա մարտահրավերներին և խոչընդոտներին՝ հավելելով, որ երկու հարևան երկրների միջև հարաբերությունները կարգավորող որևէ իրավական փաստաթղթի բացակայության պայմաններում միակ բանը, որը կարգավորում է երկու երկրների միջև հարաբերությունները, բիզնեսի էթիկայի կանոններն են:

«Վանի երիտասարդ գործարարների միության» նախագահ Էրեն Գյոքչենայն իր ելույթում նշել է, որ քաղաքականությունը չպետք է խոչընդոտի տնտեսությանը, ապա իր մտահոգությունը հայտնեց ինչո՞ւ հայերը եւ թուրքերը երրորդ երկրի, այսինքն՝ Վրաստանի տարածքով պետք է շփվեն միմյանց հետ:

Հանդիպման մասնակից ավելի քան 30 գործարարներ ներկայացրել են տուրիզմի, գյուղատնտեսության, շինարարության, քարի մշակման, քաղցրավենիքի արտադրության եւ այլ ոլորտներում իրենց ծառայությունները: Փակ սահմանների եւ պետական մակարդակով հարաբերությունների բացակայության պայմաններում գործարարները փորձելու են նպաստել տարածաշրջանում տնտեսական համագործակցության զարգացմանը, համատեղ մտածել ու երկու երկրների տնտեսական հարաբերությունների խոչընդոտների ուղղությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր:

Օրվա վերջում, նախատեսվածի համաձայն, «Երևանի և հարակից մարզերի երիտասարդ գործատուների միության» և «Վանի երիտասարդ գործարարների միության» միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, որով երկու կողմերի երիտասարդ գործարարների միջև ստեղծվեց համագործակցության նոր հարթակ:


Առաջիկա երկու օրերին նախատեսված են հայ գործարար երիտասարդների այցելություններ Վանում տեղակայված ձեռնարկություններ, որպեսզի տեղում ավելի մանրամասն ծանոթանան տեղի արտադրության և բիզնես հնարավորությունների հետ:

## Վրացի մասնագետները ուղեւորվել են Թուրքիա՝ վրացական դարձրած հայկական տաճարի ռեստավրացիոն աշխատանքները գնահատելու

**Հուլիս 18, 2013 | 16:23**

Մի խումբ վրացի մասնագետներ երկօրյա այցով մեկնել են Թուրքիա, որպեսզի գնահատեն աշխատանքները, որոնք իրականացվում են վրացական դարձրած հայկական Իշխան տաճարում: Այս մասին հայտարարել է Վրաստանի հուշարձանների պահպանության եւ մշակույթի նախարարության մամուլի ծառայությունում: Վրացական պատմիչության կազմում են մշակույթի նախարարության ներկայացուցիչներ եւ այլ մասնագետներ:

Հաղորդագրության համաձայն՝ սա վրացի մասնագետների արդեն երրորդ այցն է Թուրքիայի տարածքում գտնվող Իշխան եւ Օջբավանք: Նրանց մշակած մի շարք խորհուրդներ հաշվի են առնվել ռեստավրացիայի գործընթացում:



Նշենք, որ հայ մասնագետները բազմիցս հայտարարել են, որ Օջբավանք մենաստանն ու Իշխան եկեղեցին հայկական ճարտարապետական կոթողներ են, ավելին՝ դրանք հայկական անուններ ունեն:

Թուրքական իշխանությունները փորձում են Օջբավանքն ու Իշխանը վերագրել վրացական մշակույթային ժառանգությանը: Վրացիներն էլ իրենց հերթին այցեր են իրականացնում փորձելով թուրքական իշխանություններին համոզել, որ հուշարձանները պատկանում են վրացական մշակույթին:

## Միջազգային

### Հռոմի պապն Ստամբուլում կոչ է արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը եւ արժանացել ծափողջույների



**Հուլիս 03, 2013 | 00:04**

Թուրքական Takvim պարբերականի լրագրող Էրգյուն Դիլերն իր «Հռոմի պապի Գեզին» հրապարակման մեջ «Գեզի» այգու իրադարձություններում փորձ է անում մեղադրել Թուրքիայի ներսում Թուրքիայի «թշնամիներին»՝ հիշատակելով ներկայիս Հռոմի Պապի

հետ կապված դեպք տեղի ունեցած Ստամբուլում տարիներ առաջ:

Takvim-ի լրագրողը գրում է, թե այժմյան Հռոմի պապը 2008 թվականին դեռևս կարդինալ եղած ժամանակ այցելել է Ստամբուլի Բեյոզլու թաղամասի դպրոցներից մեկը եւ սեմինար անցկացրել:

«Կարդինալ Խորխե Բերգոլիոն, նայելով թուրք աշակերտների եւ ուսուցիչների աչքերի մեջ, ասաց. «Թուրքերը Հայոց ցեղասպանություն են իրականացրել: Դա պետք է ընդունեք»: Այս խոսքերից հետո դահլիճը պայթեց ծավերից: Ահա, հիմա այդ դպրոցի եւ նմանատիպ այլ դպրոցները շատ են «Գեզի» այգում...», - գրում է Takvim-ի լրագրողը:

### Հայտնի է դարձել Թուրքիայի զինված ուժերի թիվը

Հուլիս 02, 2013 | 04:15

Թուրքիայի զինված ուժերում ծառայողների թիվը 2013-ի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 646 հազար 218 մարդ: Թուրքական Anadolu լրատվական գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի տարածած տեղեկության մեջ նշվել է, որ, որ զինված ուժերում ծառայության մեջ գտնվում է 346 զեներալ եւ ծովակալ (նախորդ տարի՝ 362-խմբ):

Թուրքիայի զինված ուժերում ծառայում են 38 հազար 938 սպա, 95 հազար 6 ենթասպա, 46 հազար 299 սերժանտ, 380 հազար 38 զինվոր:

Նշվում է, որ Թուրքիայի զինված ուժերում ծառայողների եւ քաղաքացիական աշխատողների թիվը կազմում է 646 հազար 218 մարդ:

2012-ի ապրիլի դրության Թուրքիայի զինված ուժերի թիվը կազմել էր 726 հազար 67 մարդ:

Նշենք, որ Թուրքիան իր զինված ուժերի թվաքանակով ՆԱՏՕ-ում 2-րդն է ԱՄՆ-ից (1 մլն 350 հազար ) հետո:

### Թուրքիայում ակտիվիստները կքննարկեն Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված քայլերը



Հուլիս 03, 2013 | 17:41

Թուրքիայում «Ոչ ասենք ռասիզմին եւ ազգայնականությանը» շարժումը հուլիսի 6-ին կազմակերպում է կոնֆերանս, որի ժամանակ հասարակության առաջադեմ ակտիվիստների մասնակցությամբ քննարկվելու են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ արվելիք քայլերը:

«Ոչ ասենք ռասիզմին եւ ազգայնականությանը» շարժման տարածած հայտարարության մեջ նշվում է. «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, ակտիվիստների հետ քննարկելու ենք, թե ինչ քայլեր են անհրաժեշտ իրականացնել: Կոնֆերանսը բաց է բոլորի համար»:

Նշենք, որ «Ոչ ասենք ռասիզմին եւ ազգայնականությանը» շարժումն ամեն տարի Թուրքիայի տարբեր քաղաքներում ապրիլի 24-ին կազմակերպում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սգո միջոցառումներ:

### Կարսից մինչեւ Հայաստանի սահման ձգվող երկաթուղին մինչեւ տարեվերջ կվերականգնվի. թուրք պաշտոնյա



Օգոստոս 17, 2013 | 00:09

Թուրքիայի արեւելքում երկաթգծի վերանորոգման աշխատանքների շրջանակում իրականացվող աշխատանքները հասել են Կարսի հատված եւ մինչեւ տարեվերջ կավարտվեն Կարսից Հայաստան ձգվող երկաթգծի վերանորոգման աշխատանքները: Այս մասին հայտնել է Թուրքիայի երկաթգծերի վարչության Էրզրումի տարածաշրջանային վարչության պետ Յունուս Յեշիլյուրթը:

Թուրքական IHA լրատվական գործակալության փոխանցմամբ՝ Յունուս Յեշիլյուրթը նշել է, թե Էրզրումից Կարս ձգվող երկաթգծի վերանորոգման աշխատանքներն սկսվել են մայիսին եւ արագ առաջ են գնում: Թուրք պաշտոնյան շեշտել է, թե մինչեւ տարեվերջ կավարտվեն Կարսից Աքյաքա, այսինքն, մինչեւ Հայաստանի սահման ձգվող երկաթգծի վերանորոգման աշխատանքները:

Նշենք, որ Կարսից Հայաստանի սահման ձգվող երկաթգծի վերանորոգման հետ կապված ամիսներ առաջ հայտարարությամբ էր հանդես եկել Թուրքիայի իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության Կարսից ընտրված պատգամավոր Ահմեդ Արսլանը՝ շեշտելով, թե այն դեռևս չի ենթադրում Հայաստանի հետ սահմանի բացում, քանի որ այլ խնդիրներ կան:

Թուրք պատգամավորը նշել էր, թե ինքը եւս Աքյաքայի բնակիչների չափ ուզում է, որ Հայաստանի հետ սահմանը բացվի, որի արդյունքում կզարգանա փոխադարձ առևտուրը: «Սակայն մի իրականություն կա, որ մինչ եղբայր Ադրբեյջանի «հողերը բռնագավթված

են» եւ այդ խնդիրը չի լուծվել, սահմանի բացումը չի լինի: Հայաստանի քաղաքացիները եւս Թուրքիայի քաղաքացիների պէս ցանկանում են, որ սահմանը բացվի, սակայն մենք ուզում ենք, որ Ղարաբաղի հարցը լուծվի, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ լավ հարաբերություններ ստեղծվեն», նշել էր թուրք պատգամավորը՝ շեշտելով, թէ այդ երկաթուղուն այլընտրանք կառուցվում է Կարս-Թրիվիսի-Բաքու երկաթգիծը:

### ԱՄՆ-ում թուրք հյուպատոսին գնդակահարած Համբիկ Սասունյանի վաղաժամ ազատման խնդրագիրը մերժվել է

Հունիս 05, 2013 | 19:19



ԱՄՆ Քալիֆորնիայի նահանգում դատապարտյալների վաղաժամ-պայմանական ազատման հանձնաժողովը մերժել է Համբիկ (Հարրի) Սասունյանի խնդրագիրը: Վերջինս սմահ ազատագրկման էր դատապարտվել 1982թ. Թուրքիայի հյուպատոս Քեմալ Արըքանի սպանության մեղադրանքով: Այդ մասին գրում է Լիբանանում հրապարակվող «Ազդակ» պարբերականը: Հանձնաժողովը երեք տարի առաջ էլ մերժել էր միջնորդությունը: Սան-Լուիս-Օբիսպո բանտում այս տարի իր 50-ամյակը նշած Համբիկ Սասունյանը ծնվել է 1963թ. Բեյրութում եւ մեծացել Բուրջ-Համուդ հայաշատ շրջանում: 19-ամյա Սասունյանը սպանությունից հետո ձերբակալվել էր դատապարտվել էր բանտում անցկացնելով 31 տարի: Այժմ նա հաջորդ խնդրագիրը կարող է ներկայացնել միայն երեք տարի անց:

### Թուրքիայում քրդական մեջլիս կստեղծվի

Քրդական ոչ պաշտոնական մայրաքաղաք Դիարբեքիրում Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ կստեղծվի քրդական ինքնավար խորհրդարան: Այս մասին հաղորդել է timeturk.com-ը: Ըստ Թուրքիայի Կոնգրեսի Դեմոկրատական խմբակցության նախագահ Ահմեդ Թյուրքի քրդական մեջլիսի ստեղծման գլխավոր նպատակը Թուրքիայի էթնիկ փոքրամասնության ներկայացումն ու

պաշտպանությունն է, ինչպես նաև՝ քրդական ու թուրքական իշխանությունների միջև երկխոսությունը: Նման մարմնի ստեղծման որոշումն ընդունվել է 2013-ի հունիսի 15-16-ը կայացած թուրք-քրդական համաժողովում: Ըստ նախնական տեղեկությունների՝ քրդական մեջլիսը բաղկացած կլինի 9 հոգուց և կունենա տարածաշրջանային իշխանություն:

### Թուրքիայում ԱՄՆ դեսպանն այցելել է Դիարբեքիրի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին



Հունիս 28, 2013 | 00:04

Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ֆրենսիս Ռիկարդոնեն Թուրքիայի հարավ-արևելյան շրջագայության շրջանակներում հանդիպել է Դիարբեքիրի նահանգապետի եւ այցելել Դիարբեքիրի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին:

Թուրքական փոխանցմամբ՝ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ֆրենսիս Ռիկարդոնեն տիկնոջ հետ հանդիպել է Դիարբեքիրի նահանգապետ Սուլթաֆա Ջահիթ Քըրաչի հետ, իսկ ավելի ուշ այցելել Դիարբեքիրի Սուրբ շրջանում գտնվող պատմամշակութային վայրերը:

Թուրքիայում ԱՄՆ դեսպանը Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցի այցի ժամանակ հանդիպել է գրուցել է օրեր առաջ ԱՄՆ-ից Դիարբեքիրի տեղափոխված հայտնի հայ երաժիշտ, ուղի վարպետ Ուղի Երվանդ Բոսթանջըի հետ:


Նշենք, որ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ֆրենսիս Ռիկարդոնեն օրեր առաջ այցելել էր Վանի Աղթամար կղզում գտնվող հայկական Սուրբ Խաչ եկեղեցին:

### Թուրքիայում պետությունը հայերին հատուկ ծածկագրերով է նշում

Օգոստոս 02, 2013 | 09:09

Թուրքիայում արմատներին վերադարձած հայկական ընտանիքը փորձել է երեխային ուղարկել հայկական դպրոց եւ այդ գործընթացի ժամանակ հայտնի է դարձել, որ Թուրքիայում հայերը անձը հաստատող փաստաթղթերում կրում են գաղտնի ծածկագիր:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական Ակոս պարբերականը, քրիստոնեության վերադարձած եւ իրենց երեխային արդեն հայկական դպրոց ուղարկել ցանկացող ընտանիքը դժվարին գործընթացի ժամանակ բացահայտել է, որ Թուրքիայի հանրապետության ստեղծումից ի վեր, Թուրքիայի հայերը կրում են գաղտնի ծածկագիր: Այսպես, երեխայի հարցով Ստամբուլի կրթության նահանգային վարչության կողմից Շիշլիի կրթության վարչությունն ուղարկված պաշտոնական գրության մեջ բացահայտվել է, որ հայերը կրում են 2 ծածկագիրը:



Հայկական արմատներին վերադարձած ընտանիքի փատաբանը նշել է, թե իրենք Թուրքիայի ՆԳՆ-ից պարզաբանում են պահանջում, թե ինչ նպատակով է այսբան ժամանակ հայերին ծածկագրերով նշում:

### Քրդերի պահանջները Թուրքիայից



Թուրքիայում քրդական հարցի լուծման շրջանակում ստեղծված «Բանինացների հանձնաժողովի» Արեւելյան Անատոլիայի խումբն ավարտել է իր աշխատանքները եւ զեկույց ներկայացրել երկրի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին:

Խումբը գործել է հիմնականում քրդերով բնակեցված Թուրքիայի հարավարեւելյան շրջաններում (Արեւմտյան Հայաստան – ՍիվիլՆեթ) Երզնկայում, Բիթլիսում, Էրզրումում, Մուշում, Կարսում, Արդահանում, Իգդիրում, Բայազետում, Դատվանում, Վանում, Հաքարիում, Դերսիմում, Մալաթիայում: Այն ընդհանուր առմամբ այցելել է 171 բնակավայր եւ հանդիպել հազարավոր մարդկանց, լսել նրանց կարծիքը քրդական հարցի

վերաբերյալ, նշել նրանց գրավոր եւ բանավոր առաջարկներն ու պահանջները:

Զեկույցը բավական ուշագրավ է, քանի որ փաստացի առաջին համալիր փաստաթուղթն է, որ ներառում է քրդերի բոլոր պահանջները: Զեկույցը բաժանված է 6 գլխի, որոնք ըստ ոլորտների ներկայացնում են քրդերի պահանջները Թուրքիայից:

«Սոցիալ-հոգեբանական առաջարկներ ու պահանջներ» բաժնում քրդերը պահանջում են արեւմտյան շրջանների բնակիչներին ազատել նախապաշարումներից; վերացնել գործընթացին վնաս հասցնող «սահբեկչական կազմակերպություն», «երեխասպան»

արտահայտությունները; դատապարտել 1937-38 թթ. Դերսիմի ցեղասպանությունը; վերացնել էթնիկական եւ դավանական խտրականությանը, ձուլման քաղաքականությունը; վերացնել «մեկ լեզու, մեկ կրոն» արտահայտությունը, դրա փոխարեն օգտագործել «ընդհանուր հայրենիք, ընդհանուր պետություն» ձևը; ներողություն խնդրել քուրդ ժողովրդից, ինչպես նաեւ թուրքերից՝ սխալ եւ թյուր տեղեկությունների տրամադրման համար; հրաժարվել կարծրատիպային արտահայտություններից՝ «Երջանիկ է նա, ով իրեն թուրք է համարում» (Աթաթուրքի սիրելի արտահայտություններից է – ՍիվիլՆեթ), «Թուրքը թուրքից բացի այլ բարեկամ չունի» եւ այլն:

«Քաղաքական առաջարկներ ու պահանջներ». նոր սահմանադրություն, մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունք, քաղաքական համաներում, ազատություն Օջալանին (զեկույցում շեշտվում է, որ նման պահանջով Օջալանին մոտ կանգնած կազմակերպություններից բացի՝ հանդես են գալիս նաեւ անկախ քրդական կազմակերպությունները), քաղաքական կուսակցությունների մասին օրենքի փոփոխություն, ականազերման աշխատանքների իրականացում:

Այս բաժնում քրդերը պահանջում են վերադարձնել բնակավայրերին իրենց նախկին անունները: Շատ դեպքերում դրանք հին հայկական անուններն են, ինչին քրդերը հիմնականում անտեղյակ են: Քրդերը պահանջում են վերացնել դպրոցների, կամուրջների եւ այլ վայրերի Բնոնյու, Ֆեվզի Չաքմաք եւ այլ անվանումները:

«Տնտեսական առաջարկներ եւ պահանջներ». յայլաներում անասուններին արածացնելու արգելքի վերացում, սահմանային առեւտրի թույլտվություն, քրդաբնակ շրջաններում գյուղատնտեսական որոշ ճյուղերի, ինչպես նաեւ զբոսաշրջության զարգացման խթանում:


«Սոցիալական արդարության պահանջներ». գործազրկության խնդրի լուծում, արհմիությունների աշխատանքի խոչընդոտների վերացում եւ այլն:

«Բնության վերաբերյալ պահանջներ ու առաջարկներ». վերականգնել անտառները:

«Մշակութային առաջարկներ եւ պահանջներ». հիմնովին վերանայել կրթական համակարգը, համալսարանները

չենթարկել քաղաքական ճնշումների; վերացնել սերիալները, որոնք վնաս են հասցնում քրդերի եւ թուրքերի միջեւ խաղաղության հաստատմանը; թուրքական լեզվագիտական եւ պատմագիտական ընկերությունների օրինակով ստեղծել համանման քրդական ընկերություններ:

### Քայ-քրդական շատ հետաքրքրական հանդիպում



Իրաքում Քուրդիստանի ռեզիմնալ կառավարության կայքում տեղեկություն է հրապարակվել Հայաստանի էկոնոմիկայի նախարարության պատվիրակությանն ընդունելու մասին: Ըստ տեղեկատվության, պատվիրակությունը ղեկավարել է փոխնախարար Տիգրան Հարությունյանը, իսկ կազմում են եղել ԱԺ պատգամավոր Մանվել Բաղդասարյանը ՀՀԿ-ից, նաև Իրաքում Հայաստանի դեսպան Մուրադ Մուրադյանը, ինչպես նաև գործարար աշխարհի ներկայացուցիչներ: Հանդիպումը եղել է Քուրդիստանի ռեզիմնալ կառավարության արտաքին գործերի նախարար Փալահ Մուստաֆայի հետ: Նա ասել է, որ Քուրդիստանի կառավարությունը հակված է Հայաստանի հետ հարաբերության հաստատմանը: Նա ասել է, որ տեսել են հետագա հարաբերության զարգացման երկկողմ ցանկություն եւ հուսով է, որ Հայաստանը դիվանագիտական ներկայացուցչություն կբացի Քուրդիստանում՝ տնտեսական, քաղաքական, մշակութային եւ կրթական հարցերում գործակցության համար:

Քրդական կողմը խոսել է այն մասին, որ Հայաստանի կրթական հաստատությունները կարող են օգտակար լինել Քուրդիստանի ներկայացուցիչների համար: Հայկական կողմից Տիգրան Հարությունյանը նշել է, որ Հայաստանի կառավարությունում շարունակվում են դիվանագիտական ներկայացուցչության հեռանկարի շուրջ քննարկումները: Նա միաժամանակ հայտնել է նաև, որ ուսումնասիրվում է ներդրումային դաշտն ու համատեղ ձեռնարկություններ ստեղծելու հնարավորությունը: Հանդիպման ընթացքում, ըստ հաղորդագրության, քննարկվել են նաև անցյալի, պատմության ծանր եւ ողբերգական իրադարձությունները:

Քրդական կողմը մատնանշել է ոչ միայն առաջնորդների, այլ նաև երկու ժողովուրդների մակարդակով հարաբերությունների հաստատման կարևորությունը:

### Կուբան նշում է հեղափոխության 60-րդ ամյակը

26 Հուլիսի 2013 - 11:10



Այսօր Կուբայում նշում են հեղափոխության 60-րդ ամյակը:

Հիմնական տոնակատարությունները տեղի կունենան Սանտյագո դե Կուբայում: Հենց այս քաղաքում 1953 թվականին հայրենասերների բանակը Ֆիդել Կաստրոյի գլխավորությամբ գրոհեց Մոնկադայի զորամասերը: Տոնակատան միջոցառումներին կմասնակցեն նաև Վենեսուելայի, Ուրուգվայի, Բոլիվիայի նախագահները:

### Ֆրանսիան պահանջում է ԱՄՆ-ից անհապաղ դադարեցնել գաղտնալսումը

01 Հուլիսի 2013 - 17:29




Ֆրանսիան պահանջում է անհապաղ դադարեցնել ԱՄՆ-ի կողմից գաղտնալսումն այն բանից հետո, երբ ՋԼՄ-ները հրապարակեցին ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից լրտեսություն կատարման վերաբերյալ նյութեր: Լրտեսություն կատարվել էր ինչպես ֆրանսիական, այնպես էլ եվրոպական այլ երկրների դիվանագետների նկատմամբ:

Այս մասին հաղորդում է France Press-ը՝ հղում կատարելով Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդին: «Մենք պահանջում ենք, որ դա անհապաղ դադարեցվի: Մենք չենք կարող թույլ տալ այդպիսի պահվածք», - հայտարարել է Օլանդը:

HayNews.am

## Երկրի վրա մագնիսական փոթորիկ է սկսվել



Երկրի վրա մագնիսական փոթորիկ է սկսվել:

Այս մասին գրում է РИА Новости-ն՝ հղում անելով Ռոսգեոդրոմետ կիրառական գեոֆիզիկայի ինստիտուտին:

Նշվում է, որ մագնիսական փոթորիկի պատճառ կարող է դառնալ լիցքավորված մասնիկներով արագընթաց արեւային քամին, որի աղբյուրը Արեւի վրա գտնվող արեւապսակի անցքն է: Այդ անցքը գիտնականները նկատել են դեռ 10 օր առաջ՝ «Ստերեո» զոնդի լուսանկարների վրա, եւ կանխատեսել են, որ հունիսի 28-29-ը, երբ այն կթեքվի Երկրի կողմը, կարող է չափավոր մագնիսական փոթորիկ առաջանալ: Մագնիսական փոթորիկի առաջացման պատճառներն ու հետեւանքները Մայիսի կեսերին վերսկսվեց ռեւոզենային X դասի բռնկումները, որոնք դադարել էին 2012 թվականի հոկտեմբերից: Դրանք չառաջացրեցին մագնիսական փոթորիկներ, քանի որ աղբյուրը գեոէֆեկտիվ կարգավիճակում չէր: Մագնիսական փոթորիկի ազդեցությունն առողջության վրա: Մագնիսական փոթորիկները հաճախ մարդկանց մոտ առաջացնում են գլխացավեր, արագ սրտխփոցներ, անքնություն, վատ ինքնազգացողություն, կենսական նվազեցված տոնուս, ճնշման տատանումներ: Գիտնականները դա կապում են այն բանի հետ, որ մագնիսական տատանումների պատճառով դանդաղում է արյան շրջանառությունը եւ թթվածնի քաղց է առաջացնում:

## Թուրքիայում Աթաթուրքին նետել են աղբամանը



**Հուլիս 18, 2013 | 08:08**

Թուրքիայում գնալով շատանում են Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հանդեպ վիրավորական արարքները: Այս անգամ էլ Անթալիայի Ադեմ Թուլունայ Անադոլուի

լիցեյում ընդհանուր մաքրությունից հետո Աթաթուրքի լուսանկարները նետել են աղբամանը: Թուրքական Sozcü պարբերականի փոխանցմամբ



Անթալիայի Ադեմ Թուլունայ Անադոլուի լիցեյում տեղի է ունեցել ընդհանուր մաքրություն, որի ավարտին Աթաթուրքի տարբեր չափի լուսանկարներ եւ ուղեբձներով պաստառներ նետվել են լիցեյի դիմաց գտնվող աղբի կոնտեյներներում:



Նշենք, որ նախորդ տարի էլ Աթաթուրքի նկարը հայտնվել էր Թոքթաթ նահանգի ռեստորաններից մեկի զուգարանում եւ ներս մտնողներին «Բարի գալուստ» էր ասում:

**Մշակույթ**

*Մեր բարեկամ պարոն Սիրղատ Մարտիրոսյանից ստացել ենք շահեկան մի հոդված: Հոդվածը լինելով երկարաշունչ՝ տպագրվելու է Լույսի մի քանի համարում: Խմբագիր*

**Արաք**



Սիրղատ Մարտիրոսյան

Ով անցեալ ունի չի կարող յուշեր չունենալ , Թէ որ փուշ է անցեալդ, ինչ իմանաս Յուշն ինչ է: Պարոյր Սևակ:



Արաքը, իր հարուստ շրջաններով յայտնի էր թանգարժեք գորգերով: Ա. համաշխարհային պատերազմից անմիջապես յետոյ 1918-սկիզբներին եռետունից աւել ամերկահայ գորգ արտահանող վաճառականներ, եկել հաստատուել էին Արաք քաղաքում: Կարագեօգեան, Թաւշանջեան, Թիրաքեան, Կազանչեան, Թէֆէեան, Բարդվիլեան, Աւանօգեան, Աւագեան, Նահիգեան, և շատ ուրիշներ: Կարճ ժամանակում Արաք քաղաքը դարձաւ գորգի առևտրի և արտահանութեան կենդրոն: 1920-ից սկսած, շատ կարճ ժամանակում, բազմաթիւ ընտանիքներ, Թէրանից Համադանից, Թաւրիզից, Իսպահանից և Արաքի հայաբնակ շրջանի գիւղերից, որպէս մանր առևտրականներ, գրագետներ, ուսուցիչ, ուսուցիչ-ուսիներ, արհեստատրներ, խանութպաններ, և գործատրներ եկան հաստատուեցին Արաք քաղաք, բարձրացնելով հայ ընտանիքների թիւը մօտ 300-ի: Քսաներորդ դարի հենց առաջին քառեակին, Արաքը դարձաւ Իրանահայ մի ուշագրաւ գաղութ, իր ազգային, հասարակական և մշակութային կենտրոնով, իր շուրջ ունենալով չորս հայաբնակ գաւառներ, Քեամարա, Քեազազ, Բուրվարի և Գափլա: Շատ շուտով այդ շրջանի հայերից եկան հաստատուեցին Արաք Քաղաքում, Կառուցեցին իրենց սեփական ընդարձակ և նորաձև բնակարաններ: Հայ վաճառականները և միւս առևտրի և եւրպացի պաշտօնեաները մեծ մասամբ ապրում էին հայերի նորկառոյց շէնքերում որպէս վարձկալներ: Հայրս էլ Արաք քաղաքի Շուկայում ունէր իր գրասենեակը «Օֆֆիսը»: Գրասենեակի մի անկիւնում իրար վրայ դարսած էին, ահագին քանակութեամբ, մեծ մասամբ Լիլիան գորգեր: Միւս անկիւնում էր իր գրասեղանը, վրան դրած էր ապահով արկղը, դրամի և փաստաթղթերի համր: Արկղը բացում է գրագոցով: Հայրս արկղում փաստաթղթերի կողքին ունէր մի քսակ լիքը սև խոշոր համեղ չամիչ: Ըստ երևոյթի չամիչ շատ էր սիրում, ես էլ որ գնայի իր, մօտ ինձ էլ կտար:



**Հայ համայնքը Արաք քաղաքում**

1850 Թւականից է սկսւել հայերի մուտքը Մուլթանաբադ, մօտ հինգ ընտանիք մօտակապ գիւղերից եկել հաստատուել են Արաք քաղաքում, երբ հինգից վեց ընտանիք էլ Ամերիկայից, Եւրոպայից ընտանեօք եկել հաստատուել էին Հաջի Վաքիլի Ղալէում«Բերդում». մի մեծ շէնքում, որտեղ ունէին նաև իրենց գրասենեակը:

Արաքը իր շուրջ ունէր հարուստ շրջաններ, որտեղ արդիւնահանում էին ամեն տեսակի գորգեր, Մարուդ, Ջովշիան, Ֆարահան, Մալայիր, Քեամարա, Լիլիան, Մուշկաբադ, Մահալ և այլ գորգեր :



Գորգագործությունը Համարեա Արաքի շրջանի բոլոր հայաբնակ գիւղերում դարձել էր ընդհանցած զբաղմունք: ամեն մի հայի տնում տեղադրած կար մէկ կամ երկու գորգի շրջանակ: Ոչխարներից ձեռք բերած բուրդը իրենք զգում մանում, բնական գոյներով գոյնում և շրջանակի վրայ բարակ թելերով, հիստում գորգի ցանցը. ապա պարմանուհիները և հարսները գործում էին փոքր ու մեծ գորգեր: Գորգերի գծագրությունն էլ կատաւում էին հայաբնակ գծագրիչների միջոցով:

Լիլիհան գիւղի գործած գորգերը նոյնպէս յայտնի էին, թէ իրենց որակով և թէ գոյնազեղութեամբ, այնպէս որ յայտնի ճանաչում էին գտել արտասահմանում, յատկապէս Ամերիկայում:



Համակարգչից:- Մարուղ գորգ և Արաք գորգ Գորգի ցանցի նմուշ գործած քեռակնոջս միջոցով



Գործ- Արմինէ Յովասափեանի  
Գործ- Հուրիգաղ Յովասափեանի

Հուրիգաղը իմ Մագար հօեղօր դուստրը և իր դուստրը Արմինէն, երկուսն էլ շատ շնորհալի Ձեռարւեստներով նաև գորգագործութեամբ զբաղող:

Վերնում նշած երկու գորգերը մի փոքր նմուշ, իրենց աշխատանքներից:

քառեակ բաղանիքից վեր, աջ կողմում էր մի եռուղի, որտեղ նախկինում շատ հայեր էին ապրում և կոչւում էր Մեռահ Արամնէ «հայերի եռուղմ պողոտայ», ապա անվանակոչւեց Նիսանեան Պողոտայ, ի յիշատակ շատ սիրած դոքտոր Մովսէս Նիսանեանի, որը երկար տարիներ բարեխղճօրէն ծառայել էր համայնքին:

Այս փողոցի վերջում է քաղաքի հայոց ազգային դպրոցը, ապա սուրբ Մեսրոբ եկեղեցին որը հիմնւել է 1914 թականին խորէն Վարդապետի օրօք:

1903 թականին Իրանա Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ, երջանկայ յիշատակ Ս. Մահակ Արքեպիսկոպոս Այվատեանը, Բակրատ, Խորէն և Եզնիկ վարդապետներին իր հետ առած, հովական շրջակայութիւն է կատարում իր թեմի հայաբնակ գաւառներ: Փերիա, Չարմահալ, Քամարա, Ջափլաղ, Քազագ, և Մալայեր:

Գիւղերում, բացում արդիական դպրոցներ, Նոր Ջուղայից, Թարիզից, հրաւիրելով ձեռներեց ուսուցիչ-ուսուցչուհիներ և իւրաքանչիւր գաւառական գիւղում հիմնում դպրոցական շէնքեր:

Խորէն Վարդապետին կարգում է Սուլթանաբաղ և Համադան քաղաքների առաջնորդ փոխանորդ,(տեղապահ) ղեկավարելու Բուրվարի, Ջափլաղ, Քազաք,Քամարայ,և Մալայեր գավառների 60 հազար հայերի ազգային կրօնական և կրթական օջախների գործերը:

1913 թականին Արաք քաղաքի հայ ընտանիքների թիւը բարձրացել էր մօտ եռետունի:




Խորէն վարդապետը ծնւել է աղքատներով հարուստ Կաղզւանում 1872 թականին:

Աւագանի, կոչումով Վարդան: Ուսանել է Էջմիածնի Գևորգեան Ճեմարանում, Կովկասից անցնում է պարսկաստան և մի քանի տարիներ ուսչութիւն է անում Թարիզի և Նոր Ջուղայի դպրոցներում:

Խորէն Վարդապետի ջանքերով աւարտում է Լիլիհանի դպրոցի

կիսաւարտ շէնքը: Նա վերացնել է տալիս դպրոցներում աւանդ դարձած ձեծը և պատիժը, գիւղացուն ազատում է

կալածատերերին յանձնելիք ապօրինի տուրքերից: Վերցնել է տալիս կանանց գլխի կոտերը, արգիլում է նրանց բերաներին կապած օշմաղի գործածությունը, կրճատում եօթ օր եօթ գիշեր տևող հարսանիքների և հոգեհացի ծախսերը նաև անչափահասների ամուսնությունը: Բանիմաց վարդապետը իր առաջին կենդրոնատեղին հանդիսացող Համադան քաղաքի հայոց ազգային եկեղեցուն կից կառուցում է ազգային դպրոցի մի գեղեցիկ շէնք: Իսկ 1914 թականին շրջաններից հանգանակած նւիրատուրեամբ կառուցում է Արաքի եկեղեցու հոյակապ շէնքը:



Տէր Ղազար Դաւթեան  
Եսաեին)

Ս Սահակ ( նկարեց  
Հայոց եկեղեցին

Արաքի հայոց եկեղեցու կառուցման աշխատանքին, նշանաւոր դեր է ունեցել Տէր Ղազարը: Տէր Ղազարը ծնւել է Հասանաբաղ գիւղում, նախնական ուսումը ստանում է իր գիւղում, ապա մեկնում Ջուղա, յաջողութեամբ աւարտելով միջնակարգը, Ջուղայի ամենափրկիչ վանքում ձեռնադրուում է քահանայ: Նա մէկն է եղել Աէաք

քաղաքի Ս.Մեսրոբ եկեղեցու հիմնադիրներից: Պատվարծան Խորէն Վարդապետի կողմից, բարեցկամօրէն հանձն է առնում քաղաքի եկեղեցու շինարարութեան աշխատանքի համար, շրջակայ գիւղերից հանգանակություն անել: Նա շուրջ 65 տարի որպէս քահանայ, ծառայել է Արաքի քաղաքի նաև շրջակայ գիւղերի եկեղեցիներին: Նա վերջապէս 98 տարեկան հասակում վախճանւեց Թէիրանում և թաղւեց Դուլաքի գերեզմատնում:

Արաք քաղաքի համայնքը արդէն զարգացման և բազաւաճման վերելք էր արձանագրում, Քաղաքը արտակարգ եռ ու զեռի մէջ էր ընթանում: Նորակազմ գաղութը շուտով կառուցեց իր փառաւոր Եկեղեցին, ազգային դպրոցի և մանկապարտեզի սեփական շէնքեր:

Հայ ազգային դպրոցը հիմնւել է 1908 թին: Սկզբում ունեցել է երէք դասարան և մի սրահ, սակայն 1923 ին լրիւ ձևափոխւեց և համաձայն օրւան պահանջների ունենալով մեծ սրահ իր թաղրոնի բեմով, բաւարար դասարաններ, տեսչանոց, ուսուցչանոց իր բոլոր կահաւորումներով և հարմարութիւններով :

Ունենալով տաղանդաւոր կարող տեսուչներ, Ե. Մովսէսեան, Ե. Ֆրանգեան, Վ. Վալադեան, Ա. Մաքսապետեան, Միքայել Ստեփանեան, Ադամ Գրիգորեան, Ա. Յովհաննիսեան, Անուշաւան Գրիգորեան. ուսուցչուհիներ, տիկնայք, Միրանուշ Աղաբեգեան, Սաթենիկ Գրիգորեան, Հրանուշ և Անուշ գրիգորեաններ, ուսուցիչներ Արամ Աղաբեկեան, Արամ Յորդանանեան, Գասպար Յակոբեան, Յովսէփ Աբկարեան, Ա. Ալլիաւերդեան և շատ ուրիշներ: Որոնց շնչի տակ հասակ են նետել լինելով բաձր կարգի ուսեալ երիտասարդներ որ և յաջողում են ուսանել տարբեր բարձրագոյն դպրոցներում :

Դպրոցը զարգանում էր կրթական բոլոր բնագաւառներում, նոյնպէս և երգ, մարզանք, սկուտական աշխատանքներ, նաև արտոյարոցական միջոցառումներ, շրջանաւարտ միութիւն, թատերական կազմ և որակեալ երգեցիկ խումբ:



Հաջի Կարապետը իր կնոջ և Եղբօր «Հաջի Մալիմի» հետ Արաքից ուխտի էին գնացել: Երուսաղեմից վերադարձին Բաղդադ, լսելով Արմենակ Մաքսապետեանի մասին, ծանօթանալով նրա հետ, հրաւիրում է նրան Մուլթանաբաղ գալ, պաշտօնավարելու Արաք քաղաքի հայոց ազգային դպրոցում: Պրն Մաքսապետեանը ընդունւելով նրա հրաւերը 1927 թականին ստանձնում է Արաքի ազգային դպրոցի տեսչութեան պաշտօնը:

Արմենակ Մաքսապետեանը ծնել է 1887 թին Վանի Այգեստանում:



ԱՐՄԵՆԱԿ ՄԱՔՍԱՊԵՏԻԱՆ

Տարրական կրթությունը ստանում է իր ծննդավայրում: Ապա ընդունում է Էջմիածնի Գեորգեան ճեմարան: 19 տարեկանում, լսարանի բաժինը լրի չավարտած անցնում է Եգիպտոս, յոյս ունենալով իր մօրեղբոր նիւթական օժանդակութեամբ, գնալ Եւրոպա ուսումը շարունակելու, սակայն դա չի յաջողում նրան,

ուստի նիւթական նեղ պայմանների բերումով, ստիպւած է լինում գործարանում աշխատել, որպէս հասարակ գործաւոր, ամենաձանր պայմաններում անգամ կարօտ լինելով տաք սննդարար կերակրի:

1908 թականին յաջողում է անցնել Եւրոպա, երբ յանկարծ լսում է հօր սպանութեան լուրը: Ստիպւած վերադառնում է Վան, տեղ կանգնելու մօրը, երկու փոքր եղբայրներին և քրոջը:

Վերջապէս 1912 թականին յաջողում է մեկնել Ֆրանսի և արձանագրել Նանսէ քաղաքի գիւղատնտեսութեան համալսարան, որտեղ ասարտելով ստանում է համապատասխան ասարտական: 1915 թականին ասարտում է կաթնատնտեսական բարձրագոյն դպրոցը:


Նրա ջանքերով ցուցանագրւեցին և լրացւեցին Արաք դպրոցի բոլոր կահ-կարասիները, ճոխացւեց գրատարանի գրքերի քանակը, խրախուսելով աշակերտներին օգտուել գրատարանի գրքերից: Հիմք դրեց Շրջանասարտից միութիւնը, կանանց պարբերական դասախօսական ժողովներ:

Արմենակ Մաքսապետեանը որպէս թէ ուսուցիչ և թէ որպէս հասարակական գործիչ չափազանց նշանաւոր, արժէքաւոր ներդրում է ունեցել Արաք քաղաքի համայնքի ուսումնական, մշակութային նաև հասարակական բնագաւառներում:

